



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՆԱԿ» ՈՍԴՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՎԵՐՎԱԾ 4(24). 2012

«Հ ՊԱՇՏՊԱՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ)  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ  
ՈՐՊԵՏ ՈՆՁՄԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ



ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ



**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ**

ՀԱՎԵԼՎԱԾ 4(24). 2012



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ

4 (24). 2012

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Քոբանջյան Հ. Ա.

քաղաքական գիտությունների  
դոկտոր (ՈԴ), Ռազմական  
գիտությունների ռուսաստանյան  
ակադեմիայի իսկական անդամ,  
հակասահարենկուրյան գծով

### Գործազետ (ԱՄՆ)

(նախագահ)

### Չիլինգարյան Գ. Ա.

(գլխավոր խմբագիր)

### Այդինյան Ռ. Ա.

### Այվազյան Լ. Գ.

### Ապրիամով Է. Ա.

### Ավետիսյան Վ. Ն.

### Գասպարյան Տ. Շ.

### Գավթյան Ա. Մ.

### Խաչիսանյան Մ. Ռ.

### Խաչատրով Յու. Գ.

### Կարապետյան Մ. Ն.

### Մարենոսյան Ի. Ժ.

### Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակալ)

### Մարտիրոսով Լ. Ա.

### Միքարեկյան Ա. Ա.

### Մուրադյան Կ. Ռ.

### Նազարյան Ա. Ա.

### Շիրինյան Մ. Ա.

### Սեդրակյան Ս. Գ.

### Վարդանյան Ա. Գ.

### Տեր-Գրիգորյան Ն. Գ.

### Տոնիոյան Գ. Է.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

### ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

### (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՎԱՆԻ

### ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

### ՈՐՊԵՏ ՈՎՉՈՒՄԿՐԹԱԿԱՆ

### ԲԱՐԵՓՈԽՈՌՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՅԻՉ

Ա. Մ. Օհանյան, Մուտքի խոսք ..... 5

Հ. Ա. Քոբանջյան, Պաշտպանական  
կրթության բարեփոխմամբ՝ ռազմավա-  
րական փոփոխությունների կառավա-  
րումը Հայաստանում «խելացի ուժի»  
զարգացման տեսանկյունից ..... 9

### Հավելված.

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային  
(հետազոտական) համալսարանի  
(ՊԱՀՀՀՀ) ստեղծման ճանապարհա-  
յին քարտեզ ..... 25

Дорожная карта создания Нацио-  
нального (исследовательского)  
университета обороны (Н(И)УО)  
МО РА ..... 41

The roadmap of the formation of  
the National (Research) Defense  
University (ND(R)U), MOD, RA ..... 56

Զեյմս Քիզլ, Ապագայի ձևավորում.  
Հայաստանի նախաձեռնությունը մտա-  
ծողության ռազմավարական մակարդա-  
կում ..... 71

James Keagle. Shaping the future:  
Armenia's initiative in strategic-level  
thinking ..... 74

<i>Մ. Ա. Ավելիխյան, Գ. Մ. Մանասյան, Ռազմավարական խաղերը որպես կիրառական ուսուցման գործիք</i>	76
<i>Հ. Զ. Մուսայելյան, Բ. Պ. Պողոսյան, Գ. Մ. Մանասյան, ՀՀ Պաշտ- պանական ազգային (հետազոտական) համալսարանի կազմում Կր- թեանվանգործյան կենտրոնի ձևավորման անհրաժեշտուրյունը, հիմնական նպատակներն ու գործառույթները</i>	84
<i>Գ. Կ. Բալայան, Վ. Պ. Ավելիխյան, Հայաստանի Հանրապետուր- յան պաշտպանության նախարարության գիտակրթական հաստա- տուրյունների իրավական վիճակի օրենսդրական կարգավորման հարցի շուրջ</i>	88
<i>Հ. Ս. Քորանջյան, Բ. Պ. Պողոսյան, Մ. Ա. Փարլամենտան, ՀՀ ՊՆ ազ- գային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կողմից ՀՀ պաշտպանական-անվտանգային քաղաքականության գիտական բաղադրիչի ապահովման 2013 թ. ծրագիր</i>	105

ՀԱՆԴԵՍԻ ԳԻՏԱԿԱՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ա. Վ. Աղուգումյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,  
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Գ. Ե. Բարդրասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Մ. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Մ. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ո. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Հ. Հ. Մարենյան, ՀՀ ԳԱԱ բուհակից անդամ,  
Ա. Հ. Մամրաջյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Մ. Մ. Մարգարյան, բաղդարական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Մ. Մ. Միրիչանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Կ. Ս. Մուսյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Յու. Ս. Ջիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Վ. Ս. Մարգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ո. Ս. Մարտիրոսյան, ՀՀ ԳԱԱ բուհակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Ա. Հ. Միմոնյան, ՀՀ ԳԱԱ բուհակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Հ. Ա. Միսակյան, ՀՀ ԳԱԱ բուհակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
(ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ  
ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ



## ՄՈՒՏՏՔԻ ԽՈՍՔ

Ա. Մ. ՕՀԱՆՅԱՆ, քաղաքական գիրուրյունների քեկնածու,  
ՀՀ Պաշտպանության նախարար

ՀՀ ՊՆ Դրաստամակը Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազողությունների ինստիտուտի կերպափոխմանը ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային համալսարանի սլենդումը ՀՀ ռազմակրթական բարեփոխումների կարևոր փուլային քայլերից է։ Դրա հետ մեկնելով, Հայաստանում պաշտպանական ազգային համալսարան սլենդելու ծրագիրը Հայաստանի Հանրապետության և աշխարհի առաջարար գիրակրթական հաստափությունների միջև պաշտպանական-անվիրանգային ոլորտում գարգացող համագործակցության կոնկրետ ու շոշափելի ցուցանիշ է։



Մենք մեր առջև դրել ենք ոչ սրանդարը ու բարդ խնդիր։ Կան Հայաստանի Հանրապետության համեմարդությամբ շատ ավելի մեծ ռեսուրսներ ու հնարավորություններ ունեցող բազմաթիվ պերսուժություններ, որոնք նույնականացնելու մասին։ Մինչդեռ մենք, ելնելով Հայաստանի ազգային անվիրանգության և պաշտպանության հեռահար շահերից, համարեն շանքերով ոչ միայն նման հավակնուր գաղափար ենք հղացել, այլև քայլ առ քայլ առաջ ենք ընթացել և հասել այսօրվա արդյունքին, ինչը մեզ հնարավորություն է լրացնել միանգամայն գործնական կերպով քայլերի համար Հայաստանի Հանրապետությունում Պաշտպանական ազգային համալսարան սլենդելու ճանապարհային քարտեզը, որը մշակվել է ամերիկյան մոդելի գրեղայնացմամբ՝ հաշվի առնելով ՀՀ ռազմավարական շահերը, առկա ռեսուրսները, ինչպես նաև ՀՀ անվիրանգային մարդարարակերներն ու ազգային անվիրանգության ռազմավարական գերակայությունները։

Այդ են վկայում մեր կարգարած աշխատանքների հիմնական փուլերը:

2000–2002 թթ. արդիականացման ուղի բռնած Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերազիւշությունը գերազանցապես ամերիկյան գործընկերային մերոդարձանական աջակցության շնորհիվ սկսել է քայլեր չեռնարկել իր գիրակրթական բաղադրիչի համակարգային զարգացման նպատակով։ Որպես այս փուլում գրեղի ունեցած գիրամերոդական շփումների արդյունք կարող ենք նշել Հայաստանում Պաշտպանական ազգային համալսարանի սրեղծման զաղափարի հղացումը։ Այդ զաղափարի համաձայն՝ համալսարանը պետք է դառնա պաշտպանական-անվիրանգային ոլորտում արևմյան առաջադիմական շախանիշներին համապատասխանող գիրակրթական համակարգություն, որին համակարգավորեղ և շարժիչ դեր է վերապահվում պաշտպանական-անվիրանգային բնագավառում պետքական կառավարման զիրական ուղղորդման, պաշտպանական գիրության և կրթության ոլորտներում։

2003–2004 թթ. ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի հանձնարարությամբ բաղաքական գիրությունների դոկտոր Հ. Քորանջյանի կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանական ազգային համալսարանում գրեղի գիրմականների շոշափելի աջակցությամբ մշակվել փորձաքննվել ապա՝ 2005–2006 թթ., իրականացվել է Հայաստանի Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի սրեղծման առաջին փուլը՝ Հայաստանում Ազգային ուազմավարական հետազոտությունների ինստիտուտի սրեղծումը։

2007 թվականից մինչ օրս Ազգային ուազմավարական հետազոտությունների ինստիտուտը ամերիկյան գործընկերների, առաջին հերթին՝ Պաշտպանական ազգային համալսարանի, ինչպես նաև Հարվարդի համալսարանի աջակցությամբ զուգահեռաբար աշխատել է ինչպես իր կայացման ու ծավալման, այնպես էլ իր կերպավոխմամբ Պաշտպանական ազգային համալսարանի սրեղծման բազմավեկը ուղղություններով։

Եվ այսօր արդեն կարող ենք փասփել որ ունենք Պաշտպանական ազգային համալսարանի կերպավորիստան համար ելքային հնարավորություններ ունեցող Ազգային ռազմավարական հետազորությունների ինսպիրուտ, ամերիկյան գործընկերների հետ մշակված ու փորձարննված ծրագիր:

Որպես կառավարության անդամ և գերագենչության ղեկավար՝ հարկ եմ համարում նաև նշել, որ 2012 թ. մարտին ընդունված Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգի և դրա իրականացման միջցառումների կառավարական ծրագրի համաձայն՝ Հայաստանի Պաշտպանական ազգային համալսարանի մեկնարկումը նախադրեավում է 2013 թվականից: Հասկարգել է ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ԱՌՀԲ-ի 2013 թ. գործողությունների ծրագիրը, ըստ որի՝ 2013 թ. հունվարին ԱՌՀԲ-ի վերլուծական կենտրոնը համալրվելու է գիրնական-վերլուծաբանի 8 նոր հասպելքներով, ինչպես նաև կարգավելու է վերագինում և ենթակառուցի ընդլայնում: Ենթակառուցի գարգացման նպատակով արդեն հասպարգել է երկրորդ մասնաշենքի նախագիծը, որի շինարարությունը պլանավորվում է սկսել 2013 թ. սկզբին:

Զենոր բերածի վերաբերյալ գոհունակությունս հայդրնելով՝ պետք է նշեն, որ սա արդեն կոնկրետ գործի անցնելու մեկնարկ է: Իհարկե, մեզ սպասում է դժվար ու դրվագան աշխատանք, սակայն փաստ է, որ մենք արդեն իմաստավորել ենք մեր մոլոր և հեռահար նպատակներմ ու խնդիրները և ըստ այդ նախադեսել ենք դրանք իրականության վերածելու համար անհրաժեշտ նյութական ու մարդկային ռեսուրսները, ինչպես նաև այդ ռեսուրսներն օպտիմալ կերպով օգտագործելու ձևականացմանը:

Մենք ԱՄՆ-ի Հարվարդի և Պաշտպանական ազգային համալսարանների, ՀՀ Կրթության և գիրության նախարարության բարձրակարգ մասնաշելքների հետ անցել ենք երկար համապետ ուղի, որի ընթացքում ձգվել

ենք լինելու վարահեղի գործընկերներ: Համոզված եմ, որ այսուհետք էլ այդպես կլինի: Ես այդ հարցում իր կարևոր գեղան ու դերն ունի ամերիկյան առաջարար գիրակրուական հաստափությունների աջակցությամբ Հայարանի Պաշտպանական ազգային (հերազդուական) համալսարանի սրեղծումն ու պաշտպանական-անվտանգային գիրության և կրության ոլորտում հայ-ամերիկյան հելքագա արգասաքեր համագործակցությունը: Պաշտպանական ազգային (հերազդուական) համալսարանի հիմնական առաքելությունն է գիրական համապատասխան միջավայրի ձևավորմամբ պաշտպանական-անվտանգային քաղաքականություն մշակող և իրականացնող նոր սերնդի ուսումնավարական օդակի կադրերի պատրաստումը:

ՊԱՇՏԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՍՔ՝

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԽԵԼԱՑԻ ՈՒԺԻ»

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հ. Ա. ՔՈԹԱՆՉՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր (ՈԴ), ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հրավիրված առաջարար պրոֆեսոր, ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի պետ



Կրթությունն այն համակարգային գործընթացն է, որի շնորհիվ որոշակի մասնագիտական գիտելիքի հենքի վրա ձևավորվում է վերլուծաբար մտածելու հիմնարար հմտություն: Ոխտի և աշխարհի առաջատար երկրների գինված ուժերում ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտը դիտվում է որպես պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետության և զինված ուժերի մարտունակության ապահովման հիմնական գործոններից մեկը:

Պաշտպանական կրթության բարեփոխումները Հայաստանի պաշտպանական-անվտանգային բնագավառի ընդհանուր բարեփոխումների կարևոր մասն են և ավելի հուսալի ու արդյունավետ են դարձնում Հայաստանի Զինված ուժերը և ազգային անվտանգության համակարգն ընդհանուր առմամբ: Վերջին տարիներին նոր բարդ ռազմատեխնիկական համակարգերի ներդրման հետևանքով զգալիորեն աճել է պաշտպանական կրթության կարևորությունը: Ներկայիս ռազմական արվեստը նոր մակարդակի պահանջներ է ներկայացնում և զինվորներին, և սպաներին, իսկ մասնագիտական ռազմական կրթությունը (ՄՌԿ) ժամանակակից մարտի արագ վտանգվող պայմաններում տարբեր առաջարրանքներ կատարելու ունակ որակյալ կաղըներ պատրաստելու կարևոր եղանակներից է:

ՀՀ-ում պաշտպանական կրթության ոլորտի զարգացման որակական ուղենիշները ընդհանուր պաշտպանական բարեփոխումների իմաստավորման շրջանակում գիտականորեն մշակվել են ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի՝ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար բանակաշխնության պրոբլեմներին նվիրված ատենախոսությունում, որը պաշտպանվել է ՀՀ ՊՆ ԱՌՀ-ում գործող մասնագիտական խորհրդում<sup>1</sup>:

Նորամուծությունների պատճառն ու էությունը ոչ միայն պայմանավորված են «կոչտ ուժի» (բուն ռազմական) ենթահամակարգի զարգացման դինամիկայով, այլև պահանջում են միանգամայն նոր անվտանգային մտածողություն, որն այլև հիմնված չի լինի բացառապես սպառնալիքի գնահատման ու «կոչտ ուժին» կողմնորոշված մոտեցման վրա: Վերջին 10 տարիներին՝ Պրահայում ՆԱՏՕ-ի 2002 թ. գագարնաժողովից<sup>2</sup> հետո, Հայաստանը համեմատական վերլուծության և նորամուծական որոշումների ընդունման շնորհիվ նպատակամետ ձեռնարկումներով սահունարար կերպափոխեց իր պաշտպանական-անվտանգային մտածողությունը՝ «փափուկ» և «կոչտ» անվտանգային չափումների համադրմամբ ձևավորելով «խելացի ուժին» կողմնորոշված պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման նորամուծական մոտեցում<sup>3</sup>: Այս փոփոխությունների մյուս կարևոր չափումն է պաշտպանության նախարարությունում հնացած ստալինյան ոճի «ապարատային» ռազմական կառավարման աստիճանական փոխակերպումը ժամանակակից դեկավարման ու կառավարման մշակույթի՝ պաշտպանական-քաղաքական կառույցների և ռազմական

<sup>1</sup> Տես «Մանուի հաղորդագրություն»: ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքը, 21.12.2012 (<http://www.mil.am/1356082612>):

<sup>2</sup> Տես «Prague Summit Declaration» issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council in Prague, Czech Republic, 21 November 2002 ([http://www.nato.int/cps/en/natolive/official\\_texts\\_19552.htm](http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_19552.htm)):

<sup>3</sup> Տես «Հայաստանի պարտավորությունները ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում», ուժի մեջ է մտել 2005 թ. դեկտեմբերին ([http://www.mil.am/files/IPAP\\_arm.pdf](http://www.mil.am/files/IPAP_arm.pdf)), «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի 2009 Հայաստան» ([http://www.mil.am/files/IPAP%202009-2010-Unclassified\\_arm.pdf](http://www.mil.am/files/IPAP%202009-2010-Unclassified_arm.pdf)), «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի 2011-2013 Հայաստան» (<http://www.mil.am/files/IPAP%202011-2013-ARM-Declassified-1349350859-.pdf>):

մարմինների միջև լիազորությունների վերաբաշխմամբ և ստորին օղակներին իրավունքների ու պատասխանատվության լիազորմամբ:

ԱՄՆ-ում ՍՊԿ-ն բավարարում է համակարգի մի շարք հիմքային պահանջների, լաստ որոնց՝ այն պետք է լինի համընդգրկուն, փոխհամաձայնեցված, միասնական, իրատեսական, արդյունավետ և հասկացությունների, տերմինների, նպատակների, մարտահրավերների ու հնարավորությունների տեսակետից՝ համապարփակ: Ամերիկյան համակարգին ես ծանոթ եմ ռազմական, այդ թվում ցամաքային, օդային ու ծովային հարցերով կցորդի, ինչպես նաև Լեզուների պաշտպանական ինստիտուտում, Հարվարդի համալսարանի ազգային անվտանգային ծրագրում, Պաշտպանական ազգային համալսարանում, ՌԵՆԴ կորպորացիայում և Զ. Մարչալի անվան անվտանգային հետազոտությունների կենտրոնում ակադեմիական ներգրավվածությամբ իմ հինգույքս տարվա ծառայության բերումով: ՍՊԿ համակարգում ուսուցումը առանձնանում է նուավոր, կամային և ֆիզիկական մշտական մորիլիզացմամբ, բոլոր կատեգորիաների անձնակազմի ծառայողական գործունեության մեջ ֆիզիկական պատրաստվածության և դրա առաջնային դերի նկատմամբ շեշտված ուղարկությամբ, զինծառայության նկատմամբ հարգանքով և այլ տարրերով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԿՂԲՆԱՓՈԽԼԸ

Հայաստանի Զինված ուժերի ծևավորումը համընկավ Հայաստանի արդի պատմության թերևս ամենադժվար և լարված շրջանի հետ, երբ խորհրդային տիպի ամբողջատիրական կարգերից անցում էր կատարվում ազատական ժողովրդավարության արժեքներին կողմնորոշված անկախ ազգային պետականությանը: Հայաստանում անկախ պետականության ստեղծմանը զուգընթաց կանոնավոր քանակի նախագծումը դարձավ մի մարտահրավեր, որը համընդհանուր, տարածաշրջանային և ազգային անվտանգային համակարգի հետխորհրդային փոփոխությունների ծայրասիհճան անորոշության պայմաններում պահանջում էր ճշգրիտ արձագանք: Ինձ համար պատասխանատու և պարտավորեցնող գործ էր նորաստեղծ պաշտպանության նախարարության դեկավարության հանձնարարությամբ «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքների»

մշակումը, որոնք լույս տեսան 1992 թ. որպես Անկախ Հայաստանի՝ դոկտորինային բովանդակությամբ և ռազմավարական տրամաչափի առաջին ազգային ռազմաքաղաքական փաստաթուղթ<sup>4</sup>: Տվյալ հայեցակարգային հիմքերը դարձան ազգային ռազմական կրթության քաղաքականության մշակման համար հուսալի նախահենք:

Հայաստանի համար լրացուցիչ բարդություններ էին ստեղծում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող ռազմական գործողությունները, ինչպես նաև Աղրթեզանի և Թուրքիայի կողմից շրջափակումը: Անհրաժեշտության բերումով՝ բազմաթիվ հայրենասեր կամավորներ, որոնք չունեին բավարար ռազմական փորձ ու կրթություն, այդ դժվարին օրերին համարեցին բանակի շարքերը: Նրանց մի զգայի մասը մնաց կանոնավոր բանակում՝ իր մարտական փորձը հաղորդելով երիտասարդ սերնդին: Սակայն ԶՈՒ-ի բնականոն զարգացման համար անհրաժեշտ էր նաև ապահովել նրանց մասնագիտական կրթությունը, մինչդեռ խորհրդային տարիներին Հայաստանը միակ հանրապետությունն էր, որը չուներ որևէ պաշտպանական ուսումնական հաստատություն, որի հիմքի վրա զարգացվեր պաշտպանական կրթության բնագավառը:

Հայաստանի դեկավարությունը գիտակցում էր, թե որքան կարևոր է պաշտպանական կրթության դերը ազգային բանակաշինության գործում: Պաշտպանության նախարարությունը պաշտպանական կրթական հաստատությունների ստեղծման գործընթացն սկսեց 1994 թվականին. հունիս և սեպտեմբեր ամիսներին Ցամաքային և Ռազմաօդային ուժերի համար հիմնվեցին առաջին երկու կրտսեր սպայական ուսումնարանները<sup>5</sup>:

<sup>4</sup> Տես Հ. Ս. Քորանջյան, Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմնաքնները (ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյունը): Ե., 1992: «Հակամարտության եքնորադարագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմնաքնները»: Ե., 2010, էջ 486–556: Սոյն աշխատությունը մշակվել է 1991–1992 թթ. Մոսկվայում Ռուսաստանի ԱԳՆ-ի դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հարաբերությունների ենուազությունների մերուաբնության կենտրոնի, Ռուսաստանի ԶՈՒ-ի Գերագոյն շտաբի Ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի և ՌԴ Նախագահին արքնուր կառավարման ուսուաստանյան ակադեմիայի հովանու ներքո դոկտորանտուրայի ընթացքում:

<sup>5</sup> Տես ՀՀ Կառավարության 1994 թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության բազմաթիվ ռազմական հրանեանատարական ուսումնարան ստեղծելու մասին» հմ. 279 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5475>),

Միևնույն ժամանակ, նախարարությունը հիմնեց նաև հատուկ ռազմական դպրոց, որի հիմնական նպատակը երիտասարդ սերնդին ապագա գինվորական ծառայությանը պատրաստելն էր:

Տվյալ շրջանում այլորեմներից մեկը այս էր, որ չկային տարբեր առարկաների գծով անհրաժեշտ թվով որակավորված մասնագետներ, հատկապես՝ Հայոց բանակի համար ավագ սպաների պատրաստման առումով։ Այլ խոչընդոտի արագ հաղթահարմանն ուղղված ձեռնարկումներից մեկը եղավ պաշտպանական կրթության բնագավառում համագործակցության զարգացումը՝ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ, որը այդ փուլում հայտարարեց իր ազատական-ժողովրդավարական կողմնորոշման մասին։

Պաշտպանական կրթության ոլորտում հայ-ռուսաստանյան համագործակցությունը հիմնված է 1997 թ. ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կնքված բարեկամության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի վրա<sup>6</sup>։ Դրա հետ մեկտեղ, ձեռնարկվեցին նաև ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ հարաբերությունների հաստատմանն ուղղված առաջին քայլերը՝ 1994 թ. Հայաստանը միացավ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրին, որը նախատեսում է երկկողմ համագործակցություն առանձին պետությունների և ՆԱՏՕ-ի միջև։ Ծրագիրը միտված էր դառնալու ՆԱՏՕ-ի հետ նախկին խորհրդային հանրապետությունների մերձեցման հենք։ Ծրագրի յուրահատկությունն այն է, որ նա Հայաստանին հնարավորություն է տալիս ազգային անվտանգության և տարածաշրջանային կայունության ամրապնդմանն ուղղված անհատական-անվտանգային հարաբերություններ ստեղծելու ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ նրա առանձին անդամների և Դաշնության գործնկեր պետությունների հետ։ Հետագայում Հայաստանը միացավ ԳՀԽ «Պլանավորման և վերանայման գործընթա-

<sup>6</sup> Ասե՞ ՀՀ Կառավարության 1994 թ. սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության Ռազմաօդային ուժերի թոփշքատեխնիկական ռազմավիճացիոն ուսումնարանի կարգավիճակի մասին» հմ. 447 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5525>):

<sup>6</sup> Տես «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը (<http://www.parliament.am/library/erkoxm/1996-1998/73.pdf>):

ցին» (ՊՎԳ՝ *PARP*), որը համագործակցային անվտանգության ապահովման հիմնական գործիքներից է: ԳՀԽ ոգուն համահունչ՝ Հայաստանը ինտենսիվ երկկողմ խորհրդատվությունների արդյունքներով գործարկեց իր ռազմական համագործակցության «արևմտյան» ուղղությունը՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ իր առաջին գործընկեր պետություն ընտրելով Հունաստանը: 1996 թ. Հայաստանը և Հունաստանը կնքեցին ռազմական ոլորտում համագործակցությանն առնչվող մի շարք պայմանագրեր, ապա և խորացրին այդ համագործակցությունը՝ 1998 թ. ստորագրելով կրթության և վերապատրաստման մասին պայմանագիրը, որով հայ սպաներին հնարավորություն էր տրվում վերապատրաստվելու Հունաստանի ռազմակրթական հաստատություններում:

Որպես ՀՀ ՊՆ Միջազգային հարաբերությունների և ռազմական համագործակցության վարչության պետի՝ ինձ համար միանգամայն նոր ու նշանակալից իրադարձություն էր ՀՀ Պաշտպանության նախարարի անունից ձեռնարկել, հաշվեկշռել և մեկնարկային փուլում կառավարել ՍՊԿ ոլորտում միջազգային համագործակցությունը միաժամանակ և՝ արևմտյան, և՝ հետխորհրդային գործընկերների հետ:

Այսպիսով՝ 1990-ական թվականների վերջին Հայաստանը կարողացավ հարթահարել բազմապիսի մարտահրավերներ և մշակել պաշտպանական կրթության համակարգի զարգացման ուղենիշներ, որոնք դարձան ՍՊԿ ոլորտում Պաշտպանական կրթության զարգացման ծրագրով (ՊԿԶԾ) նախատեսվող ռազմավարական հեռամետ բարեփոխումների նախարուու:

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԻ ՓՈՒԼԸ

Քսաննմեկերորդ դարի սկզբին Հայաստանն արդեն ավարտել էր պաշտպանական կրթության համակարգի կերտման առաջին փուլը՝ ստեղծելով մի գործող մոբել, որը բավարարում էր Զինված ուժերի նվազագույն պահանջարկը: Մինչդեռ ակնհայտ էր, որ համակարգը շարունակում էր հիմնված լինել առավելապես հիմ՝ խորհրդային շրջանին բնորոշ «կոշտ» անվտանգությանը կողմնորոշված, մտածողության և որոշումների ընդունման գործընթացների վրա, ուստի և չէր համապատասխանում 21-րդ դարում պաշտ-

պահական անվտանգության ոլորտում առաջ եկած նոր մարտահրավերներին: Հայաստանի Զինված ուժերի համար կարևոր խնդիրներից մեկն այն էր, որ, անգամ ունենալով ռազմական ինստիտուտներ, Հայաստանը, այդուհանդերձ, ի վիճակի չեր ապահովելու ավագ սպայական կազմի կրթությունը և ստիպված էր ավելի ու ավելի մեծ քվով սպաների ուղարկել արտերկրի պաշտպանական ուսումնական հաստատություններ, հիմնականում՝ Ռուսաստան: Պաշտպանական կրթության համակարգի զարգացման համար մեկ այլ խոչընդոտ էր քաղաքացիական և պաշտպանական կրթության ոլորտների միջև խորացող ճեղքվածքը: Հայաստանը 1990-ական թվականների կեսերից ակտիվ կերպով ներգրավված է քաղաքացիական կրթության բարեփոխումների գործընթացում՝ նպատակ ունենալով Հայաստանում ներդրել միջնակարգ և բարձրագույն կրթության եվրոպական մոդելը: Ավելի շատ հայտնի որպես Բոլոնյան համակարգ՝ այդ մոդելը ներառում է բակալավրիատի, մագիստրատորայի և ասպիրանտորայի մակարդակներով իրագործվող բարձրագույն կրթություն: 2000-ական թվականների սկզբից Հայաստանի գերեք բոլոր պետական և մասնավոր համալսարանները ուսանողներին շնորհում են բակալավրի և մագիստրոսի աստիճան: Մինչդեռ այդ բարեփոխումները հիմնականում շշշափեցին պաշտպանական կրթության համակարգը:

Պաշտպանության նախարարության ղեկավարությունը քաջատեղյակ էր պյորեմին և ուղիներ էր փնտրում էապես բարելավելու իրավիճակը: Այս քաղաքականության գերակա ուղղություններն էին՝ պաշտպանական կրթության ոլորտում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացումը, այնպիսի պաշտպանական կրթական հաստատությունների ստեղծումը, որոնց գերակա գործառույթը լիներ ավագ սպայական կազմի պատրաստումը, ինչպես նաև ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի մոդելով պաշտպանական-անվտանգային միջգերատեսչական կրթության գործարկմանն ուղղված անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը: Այս գործում կարևոր փուլամիշ դարձավ 2005 թ. Հայաստան-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» (ԱԳԳԾ) ստորագրումը<sup>7</sup>: Մինչ այդ ՊՆ ղեկավարությունը 2002 թ. Պրահայի գագաթնաժողովից

<sup>7</sup> Տես «Հայաստանի պարտավորությունները ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում»:

հետո ՆԱՏՕ-ի կողմից մշակված ԱԳԳԾ-ի նկատմամբ ԱՄՆ-ի մոտեցումն ավելի լսվ ըմբռնելու համար 2003 թ. ինձ գործուղեց ԱՄՆ-ի ՊԱՀ՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի Շտարային սպաների ծրագրին: Վաշինգտոնում և Բրյուսելում կողմնորոշիչ տեղեկություններ ստանալով «առաջին ճեռքից»՝ Հայաստանի դեկավարությունը որոշեց դիմել ՆԱՏՕ-ին՝ ԱԳԳԾ-ին մասնակցելու հայցով:

ԱԳԳԾ-ն պահանջում է մշակել և հաստատել ռազմավարական տրամաշափի այնպիսի պաշտպանական-անվտանգային փաստաթղթեր, ինչպիսիք են «Ազգային անվտանգության ռազմավարությունը» և «Ռազմական դրվագինը»: Ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման ամերիկյան մերոդարանության ուսումնասիրությունը և ոռուսաստանյան մերոդարանական սկզբունքների հետ համեմատական վերլուծությունը, «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղենիշները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» մենագրական հետազոտությունը կատարվել են 2003–2004 թթ. ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի (ՊԱՀ) Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում (ԱՌՀԻ) իմ ակադեմիական ստաժավորման ընթացքում<sup>8</sup>: ԱՄՆ-ի ՊԱՀ-ում ուսումնասիրված ամերիկյան մերոդարանությամբ Հայաստանում ազգային անվտանգության առաջին ռազմավարության նախագիծը մշակելու համար ստեղծվեց Միջգերատեսչական հանձնաժողով՝ Պաշտպանության նախարար, գործող Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ և իմ գլխական դեկավարությամբ: Գլխական մշակման այս կողմնորոշիչ ստեղծագործական գործընթացում 2005–2006 թթ. ՀՀ նորաստեղծ ԱՌՀԻ-ին ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Ռազմական քոլեջի պրոֆեսոր, դրկտոր Թերեսա Սարոնին-Հելֆի ցույց տված նպատակային մերոդարանական աջակցությունը պետք է որակել որպես անգնահատելի ներդրում հայրենական անվտանգային մտածողության մեջ նորամուծական մոտեցումների ձևավորման գործում: Այժմ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» ծառայում է

<sup>8</sup> Տես Հ. Ա. Քորանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: Ե., 2008:

որպես մեթոդաբանական և մտավոր հենք՝ արևմտյան «խելացի ուժին» կողմնորոշված անվտանգային մտածողության և ռազմավարական պաշտպանական կրթության համակարգում իրազործվող բարեփոխումների առաջմղման համար:

ԱԳԳԾ-ն Հայաստանին նաև հնարավորություն տվեց պաշտպանական կրթության համակարգի բարեփոխումների մշակման գործում ներգրավելու ՆԱՏՕ-ի փորձագետներին: Ինչպես գրել է Պաշտպանական կրթության զարգացման ծրագրի ղեկավարներից մեկը՝ Զոն Բերրին, «ՆԱՏՕ-ի Աշխատանքային խմբի ուշադրության կենտրոնում են գործընկերային ՍՊԿ երեք տարրերը՝

1. կրթության և վերապատրաստման ոլորտում ժամանակակից զինված ուժերի կարիքներին համապատասխանող ուսումնական ծրագրերը,

2. դասավանդման և ուսման մեթոդները, որոնք ներդաշնակ լինեն պաշտպանական կրթության և վերապատրաստման արևմտյան հաստատություններում կիրառվող առաջավոր փորձին,

3. պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործումն ու հաստատութենական զարգացումը և երկարատև կայուն ներգրավվածության միջոցով ուսուցանումը: Յուրաքանչյուր մասնակից գործընկեր պետության համար (Հայաստան, Ադրբեյջան, Վրաստան, Ղազախստան և Մոլդովա) Աշխատանքային խումբը՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի պաշտպանական կրթության բնագավառի մեթոդաստերի մասնակցությամբ, ընդունել է ՊԿՁԾ, որում ներգրավված պաշտպանական կրթության զարգացման յուրաքանչյուր ծրագիր ձգտում է արձագանքելու գործընկեր պետության պահանջարկով պայմանագրոված առաջարկություններին», այդ թվում՝ Հայաստանի<sup>9</sup>:

ՆԱՏՕ-ի փորձագետների առաջին խումբը Երևան ժամանեց 2008 թ. գարնանը: 2009 թ. սկզբին պաշտպանական կրթության բարեփոխումների նախնական ճանապարհային քարտեզը համաձայնեցվեց ՆԱՏՕ-ի փորձագետների հետ: ճանապարհային քարտեզը կարևորեց Բոլոնիայի

<sup>9</sup> John Berry. Education Development (ED) Working Group. «PfP Consortium of Defense Academies and Security Studies Institutes Annual Report 2011». Vienna and Garmisch-Partenkirchen, May 2012, P. 11 (<http://www.scribd.com/doc/101738262/1/John-Berry>).

ստանդարտների՝ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ներմուծումը պաշտպանական կրթության համակարգի մեջ, սերժանտների պատրաստման դասընթացների կատարելագործումը, Հրամանատարաշտաբաբային ակադեմիա ստեղծելու նպատակով հրամանատարաշտաբային դասընթացների մշակումը, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի մոդելով ռազմավարական մակարդակի միջներատեսչական պաշտպանական կրթական հաստատության ստեղծումը ՀՀ ԱՌՀԻ-ի կերպարփոխմամբ:

2009 թվականից ՀՀ ՊՆ-ն սերտորեն համագործակցում է ՆԱՏՕ-ի ՊԿԶԾ խմբերի հետ: Վերջին երեք տարիներին ՊԿԶԾ խմբերից մեկը՝ դրկտոր Ջիմ Բարետի գիտական դեկավարությամբ, պաշտպանական կրթության բարեփոխումների տարրեր կողմերին առնչվող հարցերով հաճախ խորհրդատվական օգնություն է ցուցաբերել ՀՀ պաշտպանության նախարարությանը: Այս խումբն օժանդակել է կրտսեր սպայակազմի դասընթացի ծրագրերի մշակմանը, ինչպես նաև էական ներդրում է ունեցել 2013 թվականից նախատեսվող Ավագ սպայակազմի դասընթացի նպատակների, խնդիրների և ուսումնական ծրագրի մշակման գործում:

Կրթական համակարգերի ռազմավարական փոփոխությունների կառավարման գործում ամերիկյան փորձաքննությունը ՊԿԶԾ թիմին ապահովեց դրկտոր Ջեյմս Քիզլը ՊԱՀ-ից: Նա կարևոր ներդրում ունեցավ ՊԿԶԾ-ում՝ խորհրդատվություն տրամադրելով ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն ՀՀ ՊՆ ՊԱՀ(Հ)Հ-ի կերպարփոխման նախագծի վերաբերյալ, ապահովելով նաև ԱՄՆ-ի Բանակի հրամանատարության և Գլխավոր շտարի քողեզի փորձաքննությունը ուսումնական ծրագրերի ու պրոֆեսորադասախոսական կազմի զարգացման վերաբերյալ:

Հայաստանում ՊԿԶԾ թիմի գործունեության հիմնական ուղղություններից մեկը նրա ներգրավումն էր ռազմական կրթության բարեփոխումների հայեցակարգի մշակման գործում: 2009–2011 թթ. ՊԿԶԾ թիմի արդյունավետությունն զգալի չափով պայմանավորված է պաշտպանության նպատարության դեկավարության հետ սերտ համագործակցությամբ և ՀՀ ՊՆ ծրագրային որոշումների ընդունմամբ՝ ի դեմս Նախարար Սեյրան Օհանյանի և Նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տննոյանի:

2012 թ. մարտին ՀՀ Կառավարությունը հաստատեց ռազմական կրթության

բարեփոխումների հայեցակարգը, ինչպես նաև հայեցակարգում նշված կոնկրետ ծրագրերի իրականացմանն ուղղված գործողությունների պլանը<sup>10</sup>: Գործողությունների պլանով նախատեսվում են ինչպես Ռազմական, այնպես էլ Ռազմական ավիացիայի ինստիտուտների վերակազմակերպումը, Հրամանատարաշտաբային ակադեմիայի հիմնադրումը և 2013 թ. ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կերպավիճելու մեկնարկը:

#### ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ՆԱԽԱԳԻԾԸ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի նախագիծը Հայաստանի պաշտպանական կրթության համակարգի բարեփոխումների գլխամասային հիմնայուններից մեկն է և, թերևս, առավել խիզախ ձեռնարկումը: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը ստեղծվելու է գործող ԱՌՀ-ի կերպավիճմամբ: ՊԱՀՀ-ի առաքելությունն է լինելու ՊՆ-ի շորջ ռազմավարական որոշումներ ընդունող կարգերի միջգերատեսչական ներուժի համախմբումը՝ ազգային անվտանգության համակարգի բարեփոխման նպատակով: Պաշտպանական գերատեսչության շորջ միջգերատեսչական ներուժի շարունակական համախմբումը պետք է դառնա պաշտպանական-անվտանգային ոլորտում ՀՀ պետական կառավարման մշակույթի գերակա տարրը: Համալսարանի ստեղծումը նպատակառողիվ է ԱՄՆ-ի գերագույն իշխանություններին ռազմավարական քաղաքական մշակումներով և ռազմավարական տրամաչափի կադրերով սնող կառույցի՝ ԱՄՆ-ի ՊԱՀՀ-ի հետ Հայաստան-Ռուսաստան ու ՀԱՊԿ և Հայաստան-Միացյալ Նահանգներ ու ՆԱՏՕ համագործակցային հաշվեկշռի շրջանակներում ակադեմիական կամքի ձևավորմանը:

Համալսարանի ստեղծման միջոցով պաշտպանության նախարարությունը դառնալու է անվտանգությամբ զբաղվող բոլոր գերատեսչությունների ներգրավմամբ ռազմավարական մշակումների, ռազմավարական ողակի ղեկավար կադրերի պատրաստման, ռազմավարական որոշումներ ընդունող պաշտոնների նշանակվող շրջանավարտների մասնագիտական համագործակցության կենտրոն:

Համալսարանի՝ որպես Հայաստանում քաղաքականություն մշակող և որո-

<sup>10</sup> Տես «Հայաստանի Համբավետության ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ. 1 ([https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)):

շումներ ընդունող նոր սերնդի դեկավարների ծևավորման ռազմավարական կառույցի ստեղծման գաղափարը դեռ 2003 թ. առաջ էր քաշել Պաշտպանության նախարար, Հայաստանի Հանրապետության գործող Նախագահ Սերժ Սարգսյանը։ Հարկ է նշել, որ ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի նախագիծը մշակվել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԱՌՀ-ում իմ ակադեմիական ստաժավորման ընթացքում՝ 2003–2004 թթ. հետազոտական ծրագրի շրջանակներում, և պաշտպանվել նրա Ակադեմիական խորհրդում, ընդունին ՀՀ ՊՆ դեկավարության մտահղացմամբ ԱՌՀ-ն հետագայում պետք է կերպափոխակեր ամերիկյան մոդելով ՀՀ ՊՆ ՊԱՀ-ի։

2005 թվականից՝ իր հիմնադրման օրից, ԱՌՀ-ն եղել է երկու հիմնական ռազմավարական փաստարդերի՝ «Ազգային անվտանգության ռազմավարության» և «Ռազմական դրագրինի» մշակման գիտամեթոդաբանական կենտրոնը։ ԱՌՀ-ն միակ պետական «ուղեղային կենտրոն» է, որն զբաղվում է տարածաշրջանային անվտանգության հարցերով ու ՀՀ ռազմագաղաքական դեկավարության համար ռազմավարական զնահատումներ և առաջարկություններ պարունակող գաղտնի ու ոչ գաղտնի վերլուծական զեկուցագրերի մշակմամբ։ ԱՌՀ-ն լույս է ընծայում երկու պարբերական՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը և ռազմավարական հետազոտություններ հրապարակող «Աշխատանքային տեսրեր» հավելվածը՝ հաճախ ներգրավելով մտավոր ռեսուրսներ ՀՀ այլ գերատեսչություններից, ինչպես նաև մասնագետների՝ Հայաստանի բուհերից, Գյուղությունների ազգային ակադեմիայից և արտասահմանյան վերլուծական կենտրոններից։

ԱՌՀ-ն միջզերատեսչական համագործակցության արևանտյան մշակույթն արդին ներբերել է քաղաքական նախագծերի մշակման ոլորտ՝ Ազգային անվտանգության ռազմավարության մշակման ժամանակ ուղղորդելով միջզերատեսչական հանձնաժողովով։

Հայաստանի նախագծվող ՊԱՀ-ի՝ պետության դեկավար կազմի վերապատրաստման բաղադրիչը մշակվել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի և Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի համձնարարությամբ և 2010 թ. գարնանը փորձաքննվել է Հարվարդի Զ. Քենեթի անվան Պետութենագիտության դպրոցի Ազգային անվտանգության ծրագրում իմ ակադեմիական հետազոտական ստաժավորման ընթացքում՝ ծրագրի դեկավար, պաշտո-

նարող գեներալ-լեյտենանտ, պրոֆեսոր Թեղ Օլսթրյումի գիտական խորհրդատվությամբ: Տվյալ նպատակին են ծառայել նաև Թափտսի համալսարանի Իրավունքի և դիվանագիտության Ֆլետչերյան դպրոցում այդ ընթացքում տեղի ունեցած ընդգրկուն խորհրդատվությունն ու գիտական փորձաքննությունը: 2010 թ. ամռանը նախագիծը փորձաքննվել և լրամշակվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի փորձագետների հետ սերտ համագործակցությամբ՝ որպես Հայաստանում հետազոտական համալսարանների ստեղծման ընդհանուր հայեցակարգի մի մաս<sup>11</sup>: Հետազյում՝ 2011 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնում նրա առաջատար գիտաշխատող դրկուոր Ջեյմս Քիգլի խորհրդատվությունների շնորհիվ նախագիծը իմ գիտական ստաժավորման ընթացքում զարգացվել է՝ համապատասխանեցվելով ամերիկյան հետազոտական համալսարանի լիարժեք մոդելի:

2011 թ. նոյեմբերին նախագիծը քննարկվել է ՀՀ ՊՆ-ում հատուկ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին ՀՀ Պաշտպանության և Կրթության ու գիտության նախարարները, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի վաստակավոր պրոֆեսոր Ջեյմս Քիգլը, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանության բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաև ՆԱՏՕ-ի ՊԿՉԾ միջազգային խմբի փորձագետներ<sup>12</sup>: Լրամշակված նախագիծը՝ ճշգրտված ճանապարհային քարտեզով հանդերձ, ներկայացվել է 2012 թ. հունիսին Երևանում կազմակերպված գիտագործնական սեմինարի ժամանակ, որին մասնակցում էին ՀՀ Պաշտպանության նախարարը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանը, ՀՀ-ում ԱՄՆ-ի փոխդեսպան Բ. Դոնահյուն և ԱՄՆ-ի ՊԱՀ-ի առաջատար գիտաշխատող, ՀՀ ՊԱ(Հ)Հ-ի նախագծի գիտական խորհրդատու դրկուոր Ջեյմս Քիգլը<sup>13</sup>:

<sup>11</sup> Տես Հ. Ա. Քորանչյան, Ռազմավարության կողմնորոշված միջգերատեսչական միջավայրի ձևավորում. բարձրագույն պաշտպանական-անվտանգային դպրոցի մոդելը (գիտական ստաժավորում Հարվարդի համալսարանում ելքասիական անվտանգության ծրագրում, ԱՄՆ, 2010 թ. մարտի 1–մայիսի 1): «Հակամարտության եթորադարագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմներները», էջ 724–762:

<sup>12</sup> Տես «Մամնը հաղորդագրություն», 24.11.2011 (<http://www.mil.am/1322144501/page/23>):

<sup>13</sup> Տես James Keagle, Adrian Martin. Organizing for National Security: Unification or Coordination? «Defense Horizons», December 2007, N 60 ([http://www.ndu.edu/CTNSP/docUploaded/DH\\_60.pdf](http://www.ndu.edu/CTNSP/docUploaded/DH_60.pdf)):

Ծրագրով նախատեսվում է Համալսարանի և՝ գիտահետազոտական, և՝ կրթական բաղադրիչների գարգացումը՝ գիտահետազոտական ու կրթական գործունեությունների համակցման հիմքի վրա: Գիտահետազոտական բաղադրիչը ներառելու է երեք կենտրոններ, որոնք գրադարձնելու են, համապատասխանաբար, միջազգային ու տարածաշրջանային անվտանգության, պաշտպանական-անվտանգային ռեսուրսների կառավարման ու կիրեռանվտանգության հետազոտություններով, ինչպես նաև կիրառական ռազմավարական ուսուցմանը: Կրթական բաղադրիչը ներառելու է երկու քոլեջ՝ միջին ու բարձր օղակների գիննվորական և քաղաքացիական ծառայողների համար 10-ամյա մագիստրոսական, ինչպես նաև միջգերատեսչական վերապատրաստման ծրագրերով: ՀՀ ապագա ՊԱՀՀ-ում կշարունակեն իրենց գործունեությունը ԱՌՀԻ-ի ասպիրանտուրան և քաղաքագիտության ու միջազգային հարաբերությունների գծով դրվագների գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը:

Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի նախատեսվող կարևոր գործառություններից մեկը ռազմավարական ֆորումների անցկացումն է: Ֆորումները հնարավորություն են տալիս հաղթահարելու պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման և որոշումների նախագծերի պատրաստման գործում մինչ այժմ կիրառվող խորհրդային «բյուրոկրատական» ձևաչափի անկատարությունը: Արդեն ձեռք է բերվել ֆորումների անցկացման որոշակի փորձ: Այսպես. 2011 թ. մայիսին ԱՌՀԻ-ն և ՀԱՊԿ-ի քարտուղարությունը համատեղ կազմակերպեցին ՀԱՊԿ-ի հայեցակարգային-ռազմավարական փաստարդերի մշակմանը նվիրված միջազգային գիտաժողով, որին մասնակցեցին ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ռազմավարական հետազոտությունների կենտրոնների առաջատար նախագիտներ<sup>14</sup>: 2011 թ. և 2012 թ. նոյեմբեր ամիսներին ԱՌՀԻ-ն կազմակերպեց «Տարածաշրջանային անվտանգության դիմանիկան Հայաստանի Հանրապետությունում» փորումներ, որոնց մասնակցում էին ինչպես Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ ու ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ, այնպես էլ հեղինակավոր հայրենական ու

<sup>14</sup> Տես «ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության նոր ռազմավարական հայեցակարգի մշակման հեռանկարների մասին»: «Ազգ» օրաքանր 2011 թ. մայիսի 24 (<http://www.azg.am/AM/2011052408>):

միջազգային փորձագետներ, այդ թվում՝ Հարվարդի և Օքսֆորդի, Ստամբուլի «Քաղիք Հաս» և Երևանի համալսարաններից, Ամերիկյան արտարին քաղաքականության խորհրդից, բրիտանական «Չարեն Հառուց» և Քառնեզի հիմնադրամի Սոսկովյան կենտրոններից<sup>15</sup>:

Քաղաքականության մշակման կարևոր գործիքներից է ռազմավարական խաղը: Ըստ այդմ՝ ԱՌՀ-ն 2011 թ. նախաձեռնեց ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ռազմավարական խաղերի մերողաբանության ուսումնասիրում: Դրա հիման վրա ԱՌՀ-ն 2012 թ. մայիսին Հայաստանում առաջին անգամ կազմակերպեց ռազմավարական անվտանգային խաղ, որի արգասիքները ներկայացվեցին «Աշխատանքային տեսրերում»՝ Ղարաբաղյան հակամարտությանն ու «Հայաստան–Թուրքիա» ռազմավարական երկխոսության հեռանկարներին նվիրված մշակումների ժնով:

Մեր շահագրգիռ մասնակցությամբ 2012 թ. ՀՀ Կառավարության կողմից հաստատվեց ռազմական կրության հայեցակարգը, ինչով ավարտվեց Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կերպավոխմանը Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի ստեղծման նախապատրաստական փուլը<sup>16</sup>: 2012 թ. վերջին ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն Պաշտպանության նախարար U. Օհանյանին ներկայացրեց ՀՀ ՊԱ(Հ)Հ-ի հետազոտական բաղադրիչի գարգացման վերաբերյալ համալիր ծրագրի գեկույցը, որում հանգամանորեն ներկայացված են կերպավոխման ուղղությամբ ծեռնարկվելիք գործնական քայլերը և դրանց ֆինանսական առումները:

Տվյալ նախագծով ՀՀ ՊԱ(Հ)Հ-ի ստեղծումը, որի նպատակն է ռազմավարական նորամուծական փոփոխությունների միջոցով ապահովել Հայաստանի ռազմավարական օդակի նոր սերնդի նեկավարների պատրաստումը

<sup>15</sup> Տես ««Regional Security Dynamics in the South Caucasus» Annual International Forum». «Political Science Association of Armenia» ([http://www.psaa.am/?module=article&utility=show\\_article&type=news&id\\_article=92&lang=en](http://www.psaa.am/?module=article&utility=show_article&type=news&id_article=92&lang=en)):

<sup>16</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական կրության հայեցակարգը և սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք 9–18, 2012 թ. մարտի 7 (<https://www.e-gov.am/protocols/item/135/>):

միջգերատեսչական մակարդակով, կմեկնարկի 2013 թվականին: Պաշտպանական համալսարանուն կազմակերպվող միջգերատեսչական կրթությունը հնարավորություն կտա տվյալ խնդիրը լուծելու ոչ միայն պարբերաբար անցկացվող միջգերատեսչական, թեև շատ կարևոր, սակայն առանձին հավաքների միջոցով, այլև պաշտպանության նախարարության հովանու ներքո իրազորձվող՝ գերատեսչությունների ուղղմավարական ղեկավարության հիմնավոր՝ միասնական, ուսուցմամբ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

20 տարվա ընթացքում՝ ՀՀ Զինված ուժերի ստեղծումից ի վեր, ՀՀ պաշտպանական կրթության համակարգը ենթարկվել է լուրջ փոփոխությունների: Այդ համակարգի բարեփոխումները, որոնք սկսվեցին 2000-ական թվականների կեսերին, նպաստեցին այն անցումային գործընթացին, որը նպատակատղված էր խորհրդային շրջանից ժառանգված, հիմնականում հնացած համակարգի հաղթահարմանը և ժամանակակից կրթական մերոդարձության ու գործիքարանի յուրացմանը: Այս համատեքստում ՆԱՏՕ-ի ԳՀԽ ՊԿԶԾ-ն դարձավ Հայաստանի ՄՌԿ համակարգի արդիականացման նորամուծական գործիք՝ ապահովելով դրա համատեղելիությունը աշխարհի առավել արդյունավետ կրթական մոդելների հետ և համապատասխանությունը փոխկապված գիտահետազոտական, կրթական ու վերաբարաստական գործընթացների առավել առաջադիմական ստանդարտներին և տեխնոլոգիաներին:

Հավելված

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
(ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍՈՒՐԻՆ  
(ՊԱՀՀ) ԱՏԵՂԾՄԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ДОРОЖНАЯ КАРТА СОЗДАНИЯ  
НАЦИОНАЛЬНОГО (ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО)  
УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ  
(Н(И)УО) МО РА

THE ROADMAP OF THE FORMATION  
OF THE NATIONAL (RESEARCH)  
DEFENSE UNIVERSITY  
(ND(R)U), MOD, RA

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍՈՐԱՆ (ՊԱՀՀ)

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՂՏԵԶԻ ՄԵԿՆԱՐԿԸ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝

ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆ  
ՀԱՐՎԱՐԴԻ ՀԱՄԱԼՍՈՐԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ • ՀՀ ԳԱԱ

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՂԿԵՈՐ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՀԱՅԿ ՔՈԹԱՄՋԱՆ  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ի ՊԵՏ

1

## ՊԱՀՀ-Ի ԳԵՐԱԿԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԽՏԱԲԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊՈՒՄՈՎ

ԱՄՆ-ՀՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ «ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ»  
ԸՆԴՀԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (2005 թ.-ի 8)  
ՊԱՀՀ-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՈՐՊԵՍ  
ԱՅՆ ԲԱՑԻ ՎԵՐԱՑՄԱՆ՝ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂՈՏՈՒՄ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԱԲԵՆՆԱԿԱՆ  
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՆՀԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՅՈ  
ԽՈՍՔԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԻՋԳԵՐԱՏԵՍԶԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՄ  
ԱՄՆ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԵԿԱԿԱՐՈՒԹՅԱՆԸ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՎ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐՈՎ  
ԵՎ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՏՐԱՄՊԵԱՓԻ ԿԱՊՐԵՐՈՎ ՄՆՈՒՑՈՂ  
ԿԱՌՈՒՅԹԻ ՀԵՏ ՀՀ ԳԵՐԱԿԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ԳԻՏԱՓՈՐՁԱԲԵՆՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ

2

## ՊԱ(Հ)ՀԻ ԳԵՐԱԿԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊՈՒՄՈՎ

ՊԱ(Հ)ՀԻ ՍՏԵՂԾՄԱՆԲ ՀՀ ՊՆ-Ը  
ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՌՆՈՒՄ Է  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԲ ԶԲԱԴԿՈՂ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԳՐԱԿՄԱՆԲ ԿԱՏԱՐԿՈՂ ՈՎՋՄԱԿԱՐԱԿԱՆ ՄՃԱԿՈՒՄՆԵՐԻ,  
ԴԵԿԱԿԱՐ ԿԱՂՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ,  
ՈՎՋՄԱԿԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՅՏՈՒՄՆԵՐԻ ՆՃԱՆԱԿՎՈՂ ՇՐՋԱՆԱԿԱՐԾՆԵՐԻ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

3

## ՀՀ ՊՆ ՊԱ(Հ)ՀԻ ԱՐԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-Ի ՊԱՅՏՈԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԱՐԱՆԻ ՄՈԴԵԼԻ  
ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՊՆ-Ի ԾՈՒՐ ՀԱՄԱՆՄԲԵԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՋԳԵՐՈԱՏԵՍՉՈՎԱԿԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺՅ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

4

## ՀՀ ՊՆ ՊԱ(Հ)Հ-Ի ՆՊԱՏԱԿԸ

ՊԱՇՏՊԱՆՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՅ  
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ  
ՆՈՐ ՍԵՐՄՆԻ ԿԱՂՐԵՐԻ

Անցյալ դարի 70-ական թվականներից ԱՄՆ-ի առաջատար գիտահետազոտական կենտրոնները (հատկապես՝ ՌԵՆԴ կորպորացիան) պետական կառավարման արդյունավետության մեծացման նպատակով սկսել են ինտենսիվորեն կիրառել ռազմավարական խաղերը որպես կիրառական ուսուցման կարևոր գործիք՝ գործառույթների շրջանակում ստացված գիտելիքը կոնկրետ հիմնախնդիրների լուծման համար օգտագործելու առողջությունը:

Ներկայումս պետական պաշտոնյաների ներգրավմամբ ռազմավարական խաղերի անցկացման միջազգային առաջատար կենտրոններից մեկն է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոնը (ԿՌՈՒՖԿ՝ *Center for Applied Strategic Learning*), որտեղ շարունակում է զարգանալ ռազմավարական խաղերի մերորանությունը և ընդլայնվել ռազմավարական որոշումների ընդունման գործընթացին ուղղված ուսումնասիրությունների կրթական ու հետազոտական հենքը:

Ռ-ազմավարական խաղերը կազմակերպվում են հիմնականում երկու՝ ուսուցողական և հետազոտական նպատակներով:

Որպես ուսուցման գործիք՝ խաղերն առավելապես կազմակերպվում են դասընթացների ժամանակ և ուղղված են ծնավորելու գիտելիքների հարստացման ու ամրապնդման և հմտությունների ձեռքբերման համար գործնական միջավայր:

<sup>9</sup>Տես Հ. Սյուլիսան, Կառավարման և դեկավարման դերը բարդ տուրբովենտ կազմակերպական միջավայրներում: «Հայկական բանակ», 2012, հմ. 1–2:

\* Անգլալեզու մասնագիտական զրականության մեջ ստվորաբար օգտագործվում են war games, strategic games, crisis simulations, simulation exercises տերմինները:

Որպես հետազոտական գործիք՝ ռազմավարական խաղերն անցկացվում են շահագրգիռ գերատեսչությունների առաջատար մասնագետների ներգրավմամբ և նպատակ ունեն կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ կամ կոնկրետ պրոբլեմի քննարկմամբ պատրաստել համապատասխան մշակումներ այդ ուղղությամբ ռազմավարական որոշումներ ընդունելու համար<sup>10</sup>:

Երկու դեպքում էլ մշակվում է խաղի սցենար, որի միջոցով մոդելավորվում է իրավիճակը և նախանշվում են դրա զարգացման հնարավոր տարրերակ-ները<sup>11</sup>:

Ուսուցողական խաղերում սցենարը բավականին հաճախանալից և հստակորեն է ներկայացնում խնդրի պայմանների վրա ազդրող էական գործոնները, հնարավորինս կոչտ է սահմանվում դերերի գործառության շրջանակը՝ ըստ խաղի նպատակների: Ուսուցողական խաղերում, ի տարրերություն հետազոտական խաղերից, առավել կարևորվում է ոչ թե խաղի վերջնական արդյունքը, այլ ընթացքը, որի ժամանակ ունկնդիրները ուսումնախրում են տիպային խնդիրների լուծման օպտիմալ եղանակները, ձեռք են բերում իրենց գիտելիքների կիրառման հմտություն ինչպես անհատական, այնպես էլ թիմային մակարդակով: Ընդունակ սցենարը հնարավորություն է տալիս միևնույն խնդիրը դիտարկելու քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական, տեղեկատվական և այլ տեսանկյուններից կամ դրանց համակցությամբ:

Հետազոտական խաղերի սցենարները նախատեսում են դերակատարումների ազատության ավելի մեծ աստիճան, քանի որ հաշվի է առնվում մասնակիցների բարձր մակարդակի մասնագիտական պատրաստականությունը<sup>12</sup>:

<sup>10</sup> Stu Margaret M. McCown. Strategic Gaming for the National Security Community. «Joint Force Quarterly» («JFQ»), 4<sup>th</sup> Quater 2005, Issue 39 (<http://www.ndu.edu/press/lib/pdf/jfq-39/JFQ-39.pdf>):

<sup>11</sup> Stu Peter deLeon. Scenario Designs: An Overview. «Simulation & gaming», March 1975, Vol. 6, N 1:

<sup>12</sup> Stu «Designing Exercises for Teaching and Analysis». By the Center for Applied Strategic Learning. «JFQ», 4th quarter 2009, Issue 55 (<http://www.ndu.edu/press/lib/images/jfq-55/31.pdf>):

Խաղերի սկզբում խնդրո առարկայի վերաբերյալ տեղեկությունը կարող է ներկայացվել փաստարդերի փաթեթի տեսքով, լուրերի հաղորդման, տեսանյութերի կամ ճեպազրույցների ձևով: Դրանց արձագանքելու համար մասնակիցներին տրվում է սահմանափակ ժամանակ, որպեսզի նրանք մտավոր լարված գրոհներով կարողանան հնարավորինս արդյունավետ որոշումներ ընդունելու հմտություններ ձեռք բերել: Նման մոտեցման նպատակը իրականին մոտ պայմաններում մասնակիցների պատրաստումն է տարաբնույթ ռազմավարական լուծումների:

Ռազմավարական խաղի ընթացքում մասնակիցների միջև ստեղծվում է սիներգիկ փոխներգործություն, փորձի և գաղափարների փոխանակում և համադրում, ինչը նպաստում է նոր մտքերի և եզրահանգումների ձևավորմանը:

Խաղի ընթացքում առաջ եկած ցանկացած նոր դրվագ կարող է հետագայում ուսումնասիրվել տարրեր դիտանկյուններից<sup>13</sup>: Այս առումով, քաղաքականություն մշակողները, վերլուծելով խաղի ընթացքը և ընդունված որոշումները, կարող են հավելյալ հետազոտություն կատարել՝ մասնագետների հետ փորձելով կանխատեսել ընդունվելիք որոշումների ազդեցույթամբ պայմանավորված հետազա զարգացումները<sup>14</sup>:

Մասնագիտական գրականության վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ուսուցողական ռազմավարական խաղերի միջոցով գիտելիքի և դրա կիրառման վարպետության ձեռքբերումը տեղի է ունենում երեք հիմնական փուլերով: Առաջին փուլում մասնակիցը պրոբլեմի վերաբերյալ ստանում է համապարփակ կողմնորոշիչ տեղեկույթ, որը պարունակում է սցենարում, և այդ տեղեկույթի հիման վրա վկասում է հաղորդակցվել մյուս մասնակիցների հետ, այսինքն՝ կատարվում է գիտելիքների ու փորձի փոխանակում, որը հանգեցնում է գիտելիքների համախմբման կամ համապատասխան բազայի ստեղծման: Երկրորդ՝ «հետխաղային» փուլում, մասնագետները վերլուծում են ստացված համախումբը՝ մշակելով նոր գիտելիք: Երրորդ փուլը տեղի է ունենում մասնագիտական

<sup>13</sup> Stu Arjen Boin, Celesta Kofman-Bos, and Werner Overdijk. Crisis simulations: Exploring Tomorrow's Vulnerabilities and Threats. «Simulation & gaming», September 2004, Vol. 35, N 3:

<sup>14</sup> Stu Edward Borodzicz, Kees van Haperen. Individual and group learning in crisis simulations. «Journal of contingencies and crisis management», September 2002, Vol. 10, N 3:

փորձաքննությամբ գիտելիքի վերածված տեղեկույթը խաղի մասնակիցներին փոխանցելու միջոցով:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԿՈՌԻԿ-ը սերտորեն համագործակցում է ինչպես ՊԱՀ-ի քոլեցիների, այնպես էլ տարրեր պետական գերատեսչությունների (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության, արտգործնախարարության, Կոնգրեսի և հետախուզական ընկերակցության անդամ կազմակերպությունների) հետ: Դրանց պատվերով ԿՈՌԻԿ-ը մշակում և կազմակերպում է ռազմավարական խաղեր, որոնց նպատակն է շահառուներին տրամադրել հանապատասխան փորձագիտական մշակումներ՝ ռազմավարական գնահատումների, խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների և որոշումների նախագծերի ձևով:

ԿՈՌԻԿ-ը, պատվիրատուի հետ համագործակցելով, ճշգրտում է խաղի նպատակները և խնդիրները, որից հետո որոշվում են մասնակիցների շրջանը և խաղի անցկացման մերոդարձանությունը: Այնուհետև Կենտրոնի անձնակազմը մշակում է խաղի սցենարը: Խաղի ավարտից հետո ԿՈՌԻԿ-ի փորձագետները վերլուծում են խաղի ընթացքում ստացված տեղեկույթը, ինչից հետո մշակում է «հետձեռնարկումային զեկուցում» (*after action report*), որը ներկայացվում է շահառուներին խաղի անցկացումից մոտավորապես մեկ ամիս անց:

Այսպիսով՝ ռազմավարական խաղերը հնարավորություն են տալիս ինչպես ամրապնդելու կիրառական ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, այնպես էլ մասնագիտորեն փորձաքննելու անվտանգային ոլորտում որոշումների նախագծերը և դրանով իսկ բարձրացնելու պետության անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության շրջանակում ընդունվող ռազմավարական որոշումների արդյունավետության մակարդակը:

**Ռազմավարական խաղերի ներքերումը ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգ՝ որպես կադրերի վերապատրաստման միջոց և արդյունավետ պետական կառավարման գործիք**

Ռազմավարական խաղերի կիրառմամբ քաղաքականության մշակման և որոշումների նախագծերի պատրաստման մշակույթը ՀՀ պետական կառավարման համակարգ ներմուծելու նպատակով՝ 2011 թվականից ՀՀ ՊՆ

ԱՌՀԻ-ն ուսումնասիրում է ԱՄՆ-ի ՊԱՀ-ում մշակված՝ ռազմավարական խաղերի մեթոդաբանությունը: Կատարված հետազոտությունների հիման վրա 2012 թ. նայիսին ԱՌՀԻ-ն ՀՀ-ում առաջին անգամ կազմակերպեց ռազմավարական անվտանգային խաղ, որի արգասիքները ՀՀ ռազմաքաղաքական դեկավարությանը ներկայացվեցին ԼՂ անվտանգության և Հայաստան – Թուրքիա հարաբերությունների զարգացման հեռանկարների վերաբերյալ մշակումների ձևով:

ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի մոդելի տեղայնացմամբ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն ՊԱՀ-ի կերպափոխներու ծրագիրը նախատեսում է համալսարանում ստեղծել Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոն, որի առաքելությունն է՝ նպաստել ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու պետության գիտակիրառական ներուժի զարգացմանը:

ՊԱՀ-ի կազմում ստեղծվելիք կենտրոնը, որպես համալսարանական գիտակրթական մարմին, պետք է գրաղվի ռազմավարական խաղերի մեթոդաբանության կատարելագործմամբ՝ դրանք օգտագործելով ինչպես գիտակրթական, այնպես էլ քաղաքականության մշակման և պլանավորման նպատակով:

Կրթական քաղաքիչի առումով կենտրոնը կազմակերպելու է ուսուցողական ռազմավարական խաղեր՝ 2013 թ. նոյեմբերին ԱՌՀԻ-ում մեկնարկող միջզերատեսչական վերապատրաստական դասընթացների և 2016 թ. ՊԱՀ-ում ստեղծվելիք ռազմավարական անվտանգային հետազոտությունների գծով մագիստրոսական ծրագրի մասնակիցների համար:

Հետազոտական քաղաքիչի առումով կենտրոնը փորձագիտական մտավոր ներուժի համադրմամբ կազմակերպելու է ռազմավարական խաղեր՝ պետության անվտանգային քաղաքականության մշակման համար ռազմավարական ուղենիշների ստեղծման նպատակով:

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՀԱՍԱԼԱՐԱՎՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԿԻԲԵՇՈԱՆՎԱԾՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵԾՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հ. Զ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ, դեխմիկական գիրուրյունների թեկնածու, «Մինապիս Արմենիա» ՓԲԸ ղմօրին, Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պարմական գիրուրյունների թեկնածու, ԱՌՀԵ-ի պետի դեղակալ-վերլուծական կենտրոնի պետ, Դ. Մ. ՄԱՆՈՒՅԱՆ, պարմական գիրուրյունների թեկնածու, վերլուծական կենտրոնի գիրմական-վերլուծաբան

21-րդ դարում, երբ տեղի են ունենում տեղեկատվական տեխնոլոգիաների խնտենակված զարգացում և պետուրյան տնտեսական, ռազմական, քաղաքական ոլորտներում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, կիրեռանվտանգության պահովումը ձեռք է բերում առանցքային նշանակություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում<sup>1</sup>:

Կիրեռանվտանգությունը<sup>2</sup> այն միջոցների, ուղղմավարությունների, անվտանգության սկզբունքների, անվտանգության երաշխիքների, ոհսկերի կառավարման նկատմամբ մոտեցումների, գործողությունների, մասնագիտական պատրաստման, առաջավոր փորձի և տեխնոլոգիաների համալիրն է, որոնք կարող են օգտագործել տեղեկությային միջավայրի զարգացման և պաշտպանության նպատակով<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես M. C. Libicki. Cyberdeterrence and Cyberwar ([http://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs/2009/RAND\\_MG877.pdf](http://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs/2009/RAND_MG877.pdf)); R. J. Deibert, R. Rohozinski. Risking Security: Policies and Paradoxes of Cyberspace Security. «International Political Sociology», March 2010, Vol. 4, Issue 1:

<sup>2</sup> Կիրեռանվտանգության պահովման խնդրին ազգային անվտանգության տեսանկյունից առաջնահերթ կարևորություն է տալիս ԱՄՆ-ը, որը դեռ 2010 թ. իր պաշտպանության համակարգում ստեղծեց կիրեռամանատարություն: 2011 թ. հունիսին պաշտպանության նախարարությունը հրապարակեց կիրեռանվտանգության պահովման ռազմավարությունը: 2013 թ. ֆինանսական տարում միայն ԱՄՆ-ի ռազմաօպային ուժերը կիրեռանվտանգության խնդրների լուծման համար հատկացնելու են 4,6 միլիարդ դոլար (տես «DOD Announces First U.S. Cyber Command and First U.S. CYBERCOM Commander», 21 May 2010, N 419-10 (<http://www.defense.gov/releases/release.aspx?releaseid=13551>); «Department of Defense Strategy for Operating in Cyberspace», July 2011 (<http://www.defense.gov/news/d20110714cyber.pdf>); B. Valeriano, R. Maness. The Fog of Cyberwar: Why the Threat Doesn't Live Up to the Hype, 21 November 2012 (<http://www.foreignaffairs.com/articles/138443/brandan-valeriano-and-ryan-maness/the-fog-of-cyberwar>):

<sup>3</sup> Տես «Definition of cybersecurity» (<http://www.itu.int/en/ITU-T/studygroups/com17/Pages/cybersecurity.aspx>):

Կիրեռանվտանգության հարցերը այսօր հատկապես արդիական են այն պատճառով, որ տեղի է ունենում վիրտուալ և ֆիզիկական աշխարհների փոխներքափանցում. վիրտուալ աշխարհում ծավալվող գործունեությունը կարող է լուր ազդեցություն գործել ֆիզիկական աշխարհի վրա՝ ինչպես նպաստելով, այնպես էլ էապես խարարելով պետության բնականոն գործունեությունը<sup>4</sup>:

Ներկայում ՀՀ-ն արագ տեմապերով անցնում է Էլեկտրոնային կառավարման համակարգի, ուստի ազգային անվտանգության տեսանկյունից ՀՀ-ի համար առաջնահերթ խնդիրներ են դառնում տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և հեռահաղորդակցության միջոցների զարգացումը, տեղեկության ենթակառուցվածքի, այդ թվում՝ կապի և տեղեկատվական համակարգերի, տարրեր ոլորտներում և մակարդակներում կառավարման ավտոմատացված համակարգերի, տեղեկույթի պաշտպանության և այլ համակարգերի անվտանգության ապահովումը: Դա մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում ներդրվող Էլեկտրոնային կառավարման համակարգը և դրանում մեծ թվով գերատեսչությունների ներառումը առավել բարձրացնում են ՀՀ կիրեռհամակարգի խոցելիության աստիճանը, քանի որ այդ համակարգի բնականոն գործունեության խաթարումը կհանգեցնի պետական դեկարտման ու կառավարման համակարգի և նրա առանձին տարրերի կենսագործունեության ձախողման:

Հայաստանում կիրեռանվտանգության համակարգի զարգացման, մասնավորապես՝ տեղեկությային անվտանգության միջավայրի ձևավորման նկատմամբ նոր համակարգային նոտեցումների մշակման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Աղրբեջանը, որն զգալի ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում իր կիրեռանվտանգության ոլորտի զարգացմանը և ընդլայնում է այդ ուղղությամբ միջազգային համագործակցությունը, ՀՀ-ի դեմ վարում է ոչ միայն քարոզչական, այլև կիրեռապատերագման:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար խիստ հրատապ է դառնում ՀՀ-ում կիրեռանվտանգության քաղաքականության մշակմանը և ոլորտի դեկարտմամբ զբաղվող որակյալ կադրերի պատրաստումը, ինչին միտված է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կերպափոխմամբ ստեղծվելիք ՀՀ Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանում 2016 թ. Ռեսուրսների կառավարման և տեղեկատվական անվտանգության բոլեցի ստեղծումը, որտեղ

<sup>4</sup> Տես Վ. Գ. Քարդումյան, Կիրեռանվտանգությունը որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ: «Հայկական քանակ», 2012, հմ. 4:

իրականացվելու է մագիստրոսական կրթություն: Քոլեջի մագիստրոսական ծրագիրը կազմվելու է այնպես, որ դրա շրջանավարտները կարողանան զբաղեցնել ՀՀ գերատեսչություններում կիրեռանվտանգության ապահովման պատասխանատունների պաշտոններ:

Նախքան քոլեջի գործառումը կիրեռանվտանգության հիմունքները մեկշաբարյա ծրագրով ընդգրկվելու են ՀՀ գերատեսչությունների միջին և բարձր օղակի պաշտոնյանների համար ԱՌՀԵ-ում 2013 թ. նոյեմբերին մեկնարկող պաշտպանական անվտանգային լրացուցիչ կրթության դասընթացում:

Մինչ համալսարանի գործարկումը՝ 2012 թ. դեկտեմբերից, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի վերլուծական կենտրոնի կազմում ձևավորվում է Ռեսուրսների կառավարման և կիրեռանվտանգության խոմք, որի գործունեության նպատակն է կիրեռանվտանգության ռազմավարության մշակման համար ուղենիշների որոշումը, ոլորտում գործող դեկավար փաստաթղթերի (2009 թ. ՀՀ տեղեկատվական անկյունանգության և 2010 թ. Էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգեր) հեռանկարային դրույյների հաշվառմամբ, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների հետ տվյալ բնագավառում ՀՀ ակադեմիական համագործակցության ընդունումը: Խնճի մասնագետները, որպես դասավանդողներ, կներգրավվեն վերը նշված դասընթացներում:

ՀՀ կիրեռանվտանգության համակարգի գիտակրթական հիմքերի զարգացման նպատակը 2014–2015 թթ. նախատեսվում է Ռեսուրսների կառավարման և կիրեռանվտանգության խմբի հիմքի վրա ձևավորել Կիրեռանվտանգության ազգային կենտրոն: Կենտրոնի հիմնական նպատակներից է կիրեռանվտանգության պետական քաղաքականության ռազմավարական ուղենիշների մշակումը: Դա ենթադրում է կիրեռանվտանգության ոլորտում տեղի ունեցող համաշխարհային, տարածաշրջանային և ներպետական զարգացումների վերլուծության հիման վրանց հետագա ընթացքի կանխատեսում, առկա և միջնաժամկետ հեռանկարում հավանական կիրեռսպառնալիքների վերհանում ու գնահատում, ՀՀ ազգային շահերից բխող՝ ոլորտի զարգացման որակական պարամետրների գիտականութեն հիմնավորված որոշում և ըստ այդ՝ տվյալ ուղղությամբ պետական համակարգի նպատակային գործունեության ուրվագծում և ծրագրում: Ռազմավարության կարևոր նպատակներից մեկը պետք է լինի ոչ միայն Աղբեջանի կողմից սանձազերծված կիրեռապատերազմի հետևանքների ազդեցության նվազեցումը, այլև նախաձեռնողական հարձակողական կիրեռացիաների ընդհանուր սկզբունքների սահմանումը:

Այս առումով հատկապես կարևորվում է Աղքածանի կողմից իրականացվող կիրեռանցագործությունների՝ որպես ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացման և հետմղման ուղղությամբ համապետական մասշտաբով համակարգված գործունեության ծավալումը:

Ընդամին հարկ է հաշվի առնել, որ Աղքածանի կողմից վարփող կիրեռապատերազմը ներառում է ինչպես զուտ տեխնիկական (օրինակ՝ ՀՀ պետական դեկավարման ու կառավարման համակարգի, ինչպես նաև հայկական կայքերի քայլայում), այնպես էլ տեղեկատվական-քարոզական (հայկական կայքեր մուտք գործելով՝ ապատեղեկույթի տարածում և այլն) քաղադիչներ:

Կենտրոնի հիմնական նպատակներից են նաև կիրեռանվտանգության պետական քաղաքականության գիտափորձաքննական վերանայումը և ճշգրտման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, կիրեռանվտանգության ոլորտում ռազմավարական փաստաթղթերի մշակման համադաշտումը:

Միևնույն ժամանակ, կենտրոնի գործունեությունը հիմքեր կստեղծի Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանում Ռեսուրսների կառավարման և տեղեկատվական անվտանգության քղեջի կազմավորման համար՝ մասնակցելով նրա գիտակրթական ծրագրերին: Հաշվի առնելով կիրեռանվտանգության ոլորտում պետական և մասնավոր հատվածներում առկա աշխատանքի վարձատրության էական տարրերությունը՝ Ռեսուրսների կառավարման և կիրեռանվտանգության խմբի, իսկ հետագայում՝ կենտրոնի համալրումը կարող է իրականացվել բուհերի համապատասխան ֆակուլտետների մագիստրոսների՝ պարտադիր ժամկետային գինվորական ծառայությունը պայմանագրային կարգով կիրեռանվտանգության կենտրոնում անցկացնելու ձևով:

Այսպիսով՝ Կիրեռանվտանգության ազգային կենտրոնն իր գործունեության մեջ օրգանապես համադրելու է հետազոտական ու կրթական քաղաքիչները՝ կատարելով գիտակիրառական մշակումներ և վերապատրաստմամբ միջզերատեսչական կտրվածքով ձևավորելով հեռանկարային դեկավար կայքեր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻճԱԿԻ  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՁ**

Գ. Ա. ԲԱԼԱՅԱՆ, իրավաբանական զիտուրյունների քեկնածու,  
ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալի աշխատակազմի  
գլխավոր մասնագետի,  
Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի  
«Հայկական բանակ» ուսումնական հանդեսի գլխավոր  
իսմրագրի տեղակալ-իրավաբան



«Բարձրագույն և հետքուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ուսումնական հաստատությունն ստեղծվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Այնինչ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության համակարգում գործող գիտական



և կրթական կազմակերպությունները գորամանաք են, որոնք չունեն գործող օրենսդրությամբ սահմանված որևէ իրավական վիճակ, օրենսդրություն կարգավորված չեն դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության դադարեցման կարգը:

Այդ կազմակերպությունները գործունեալ կազմակերպությունները կազմակերպությունների չեն կարող լինել քաղաքացիական և հարկային հարաբերությունների սուբյեկտ, օրինակ, հանդես գալ որպես գործատու կամ հարկային գործակալ:

Նշված պատճառներով հնարավոր չեն այդ հաստատություններում իրավաշախի կերպով և արդիական չափանիշներին համապատասխան կազմակերպել գիտական և կրթական գործունեություն: Օրինակ՝ կրթական գործունեություն իրականացնող հաստատությունների ավարտական փաստա-

թղթերը քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների համար իրավական հետևանքներ չեն առաջացնում\*: Դրանք չեն կարող իրավաշափ կերպով համագործակցել ՀՀ և արտերկրի կրթական և գիտական հաստատությունների հետ, ապահովել ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը, ինտեգրվել ՀՀ կրթական և գիտական համակարգերին, ներգրավել բարձրակարգ մասնագետների: Այդ հաստատությունները ՀՀ Զինված ուժերի՝ օրենքով սահմանված միանձնյա ենթակայության կառավարման համակարգ ունեցող ստորաբաժանումներ են, ուստի դրանցում հնարավոր չէ ապահովել կրթական ու գիտական հաստատությունների՝ ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով երաշխավորված ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները: Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ թեև այդ հաստատությունները կոչված են իրականացնելու բարձրագույն կրթական ծրագրեր, այնուամենայնիվ, դրանց ստեղծման և գործունեության կարգը չի համապատասխանում ոչ միայն օրենքին, այլև Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրության 39-րդ հոդվածում իմացերատիվ կերպով նշվում է բուհերի ինքնավարության սկզբունքները օրենքով որոշելու պետական իշխանության պարտականությունը<sup>1</sup>:

ՀՀ-ում կազմակերպությունների քաղաքացիական հարկային և այլ հարաբերությունները ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի բարձրագույն իրավաբանական ուժով սահմանված՝ պետության իրավականության վերաբերյալ նորմի իմացերատիվ պահանջի համաձայն իրականացվում են իրավական պետությանը բնորոշ կերպով: Բոլոր կազմակերպությունները, այդ թվում՝ պետական, պետք է ստեղծվեն ու գործեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով: Մինչդեռ

\* Նշված հանգամանքը ուղակիորեն հակասում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ կետին, ըստ որի՝ ազգային սահմանադրության հաստատությունների շրջանավարտներին արվում է զինվորական և դրան համապատասխանող քաղաքացիական կրության ավարտական փաստաթուր (տես «Կրթության մասին» ՀՀ 1999 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-297 օրենքը, հոդ. 44, կետ 2 (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=68299>)):

<sup>1</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)», հոդ. 39 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>), ինչպես նաև «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ»: Ե., 2010, հոդ. 39, էջ 464–474 (<http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>):

նշված հաստատությունները կամ դրանցում դասավանդվող առանձին ծրագրերը երբեւ չեն լիցենզավորվել կամ հավատարմագրվել, ինչը օրենսդրական պահանջ է: Փաստորեն դրանք վարում են ոչ իրավաչափ գործունեություն՝ խախտելով, մասնավորապես, կրթական և հարկային օրենսդրության պահանջները:

ՀՀ կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության էությունը, բնույթը, սկզբունքները, նպատակները, խնդիրները, երաշխիքներն ու չափանիշները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և ավելի մանրամասն կերպով ամրագրվում են ՀՀ միջազգային պարտավորություններով, օրենքներով (իմնականում՝ «Կրթության մասին» և «Քարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներով) և դրանց համապատասխանությամբ ընդունված այլ իրավական ակտերով: Այդ քաղաքականության առանցքը միջազգային, մասնավորապես՝ Եվրոպական, կրթական համակարգին ինտեգրված այնպիսի ներգետական միասնական կրթական համակարգի ձևավորումն ու զարգացումն է, որը պետք է գործի միատեսակ չափանիշների, իրավահավասարության, ինքնավարության ու ակադեմիական ազատությունների սկզբունքներով:

Պաշտպանության բնագավառում իրականացվող կրթական քաղաքականությունը պետք է լինի ՀՀ կրթական քաղաքականության բաղադրիչը: Մինչդեռ 2011 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011–2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում որևէ հիշատակում չկա պաշտպանական կրթության մասին<sup>2</sup>:

Այս պատճառով գործող օրենսդրությունը հաշվի չի առնում կրթության ոլորտում գիննորական ծառայության հետ կապված առանձնահատկությունները, որոնք բնորոշ են ՀՀ ՊՆ համակարգում գործող գիտական և կրթական հաստատություններին: Հիմնական առանձնահատկությունը տվյալ կազմակերպությունների գործառնան համար անհրաժեշտ երկակիության ապահովումն է, ինչը թելադրված է դրանցում գիննորական

<sup>2</sup> Տես «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011–2015 թվականների պետական ծրագրը հաստատելու մասին» ՀՀ 2011 թ. հոնիսի 23-ի հմ. ՀՕ-246-Ն օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69872>):

ծառայության և գիտակրթական գործունեության համադրված իրականացման օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Նշված կազմակերպություններում պետք է սահմանված կարգով իրականացվի զինվորական ծառայություն և, միևնույն ժամանակ, ձևավորվեն բուհական ինքնավարության ու ակադեմիական ազատությունների քավարար իրավական ու ֆինանսատեսական հնարավորություններ ապահովող մեխանիզմներ ու երաշխիքներ: Հակառակ պարագայում դրանց գործունեությունը կհակասի ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենքներով սահմանված՝ ՀՀ Կառավարության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտակրթական քաղաքականության հիմնադրույթներին:

ՈՒԽՏԻ Վերը նշված առանձնահատկությունների հաշվառմամբ ոլորտի օրենսդրական կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող գիտական և կրթական կազմակերպությունների իրավական կարգավիճակի անրագրումը պետք է ապահովի դրանց՝ նպատակային նախանշանակմամբ և ՀՀ օրենսդրության պահանջներին ու միջազգային պարտավորություններին համապատասխան գործառումը, ինչն իր հերքին այդ հաստատությունների գործունեության մասով կապահովի կրթության ոլորտում իրականացվող՝ ՀՀ Կառավարության քաղաքականության նպատակների իրագործումը և դրանցից բխող խնդիրների լուծումը:

Վերը նշվածի և գործող օրենսդրության հաշվառմամբ կարելի է ասել, որ պաշտպանական ոլորտի գիտակրթական կազմակերպությունների իրավական վիճակի կարգավորման պրոբլեմը հնարավոր է լուծել երկու տարբերակով, եթե դրանք վերածվեն՝

- գորամասի առկա կարգավիճակով պետական հիմնարկի,
- առկա գորամասի կարգավիճակից զրկելով՝ պետական մարմնից զատված, բայց զինվորական հաստիքներ ունեցող իրավաբանական անձի:

## 1. Զորամասի կարգավիճակով պետական հիմնարկ

Առաջինը առկա օրենսդրական հնարավորությունները անհրաժեշտ ծավալով և բովանդակությամբ ընդլայնելու միջոցով պրոբլեմի լուծման համար քավարար ռեսուրսի ձևավորման ճանապարհն է: Այս տարբերակի ընտրության հիմնավորումն այն է, որ պաշտպանական ոլորտի գիտակրթական

հաստատություններում պետք է իրականացվի զինվորական ծառայություն, ինչը հնարավոր է բացառապես պետական մարմին հանդիսացող Զինված ուժերի օրգանական մաս կազմող զորամասերում, մինչդեռ նման կարգավիճակ չի կարող ունենալ պետական մարմնից զատկած իրավաբանական անձը:

Այս առումով ուշագրավ է, օրինակ, Ռուսաստանի Դաշնության փորձը: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը ոչ միայն ռազմառության մասին, այլև բոլոր մյուս զորամասերին տվել է իրավաբանական անձի կարգավիճակ<sup>3</sup>: Սակայն Ռուսաստանը այդ քայլով բախվել է մի անուծելի պրոբլեմի: Իր գույքով (այդպիսի գույք կարող է լինել սպառազինությունը, գենքը, զինամքերքը, ինչպես նաև սահմանափակ շրջանառության այլ ապրանքներ) պարտավորություններ կրելու՝ իրավաբանական անձին բնորոշող հատկանիշի իրացման պարագայում, օրինակ՝ անվճարունակության դեպքում, գրումասը փաստորեն պետք է լուծարվի, ինչը որոշակի դեպքերում անընդունելի է: Իր հերթին՝ պետության աջակցությամբ զորամասի սնանկացման կանխումը և/կամ սնանկացման հետևանքով լուծարման սահմանափակությունների կիրառումը անհավասար նոցակցային պայմաններ են ստեղծում, ինչը նույնապես իրավաչափ չէ: Բացի այդ, պատերազմի ժամանակ հաճախ կարող է կարիք առաջանալ խիստ սահմանափակ ժամանակահատվածում զորամասերը միավորելու կամ բաժանելու, ինչն անհնար է վերակազմակերպման բարդ ու ժամանակատար գործընթացի պարագայում: Մինչդեռ իրավաբանական անձի կարգավիճակը միայն գիտական և կրթական գործունեություն իրականացնող զորամասերին տալու դեպքում հնարավոր կիխներ էապես նվազեցնել տվյալ պլորենք, քանի որ գործունեության և գույքի առանձնահատկությունների հաշվառմամբ այդ զորամասերը գույքը ենթակա չեն վերը նշված բացասական հետևանքներին: Հարկ է նշել նաև, որ ՌԴ-ում զինված ուժերի զորամասերը՝ որպես քաղաքացիարավական հարաբերությունների սուբյեկտներ

<sup>3</sup> Տես Федеральный Закон РФ от 8 мая 2010 г. № 83-ФЗ «О внесении изменений в отдельные законодательные акты РФ в связи с совершенствованием правового положения государственных (муниципальных) учреждений» (<http://base.garant.ru/12175589/>); Федеральный Закон РФ от 18 июля 2011 г. № 239-ФЗ «О внесении изменений в отдельные законодательные акты РФ в связи с совершенствованием правового положения автономных учреждений» (<http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=116980>):

ինքնուրույնությամբ համեմատելի չեն իրավաբանական անձանց հետ։ Ավելին, դրանց ինքնուրույնությունը, ըստ էության, նույնիսկ զիջում է (շահույթը տնօրինելու մասով) սույն հոդվածում առաջարկվող պետական հիմնարկի ինքնուրույնությանը<sup>4</sup>։ Ըստ էության, Ռուսաստանի Դաշնության դիտարկվող միտեցումը միտված է պետական հիմնարկներին իրավաբանական անձի կարգավիճակ տալու միջոցով դրանց և հիմնադրի գույքային պարտավորությունների զատումը ապահովելուն և, միևնույն ժամանակ, դրանց նկատմամբ հիմնադրի ամբողջական վերահսկողությունը պահպանելուն։

Գործող օրենսդրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական գիտակրթական հաստատություններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ։ Այդ կարգավիճակով պայմանավորված՝ հարաբերությունները ընդհանուր առմամբ կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներով, իսկ դրանց իրավական կարգավիճակի, այդ թվում՝ կազմակերպման և գործառնան մասը՝ առավելապես «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներով։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի ստեղծած կազմակերպությունը»։ Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Հիմնարկն իրավաբանական անձ չէ և գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա»։ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված նորմերից թիսում է, որ օրենսգրքի իմաստով «ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն» է նաև գիտական գործունեությունը<sup>5</sup>։ Միևնույն ժամանակ,

<sup>4</sup> Այս առանձնահատկության մասին ավելի հանգամանորեն տես Դ. Յո. Նովինսկի. Основные особенности государственных (муниципальных) казенных учреждений. «Налоговый учет для бухгалтера», апрель 2011. «Делопресс» (<http://www.delopress.ru/articles.php?n=8167>):

<sup>5</sup> Տես «ՀՀ քաղաքացիական օրենսգրք», հոդ. 62 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76808>):

քննարկվող հարցի վերաբերյալ սույն հոդվածով նախատեսվում է, որ «Պետական ու այլ հիմնարկների առանձին տեսակների իրավական վիճակների առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով»<sup>6</sup>: Հասկանալի է, որ 2005 թ. սահմանադրական փոփոխությունների հետևանքով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի հրամայական պահանջների թելադրանքով՝ նշված հիմնարկների իրավական վիճակը այսուհետև կարող է կարգավորվել բացառապես ՀՀ օրենքներով:

Մեր կարծիքով՝ օրենսդրական կարգավորման դաշտի առաջարկվող ընդլայնումը հնարավոր է ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետի այն պահանջի, որի համաձայն՝ առանձին տեսակների պետական հիմնարկների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենսդիրը հիմնարկի պարագայում միայն մեկ սահմանափակում է դրեւ, այն է՝ հիմնարկի իրավաբանական անձ չինելու և դրանից միանշանակ կերպով բխող համապատասխան բնույթի իրավունքների ու պարտականությունների սահմանափակումը, որը պայմանավորված է որպես սեփականություն առանձնացված գույք չունենալու և իր պարտավորությունների համար այդ գույքով պատասխանատու լինելու օրենսդրական պահանջներով: Մնացած մասով պետական հիմնարկը կարող է ունենալ իրավաբանական անձի բոլոր իրավունքները և կրել համապատասխան պարտավորություններ, այդ բվում՝ իր անունից ձեռք բերելու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, ունենալ ինքնուրույն հաշվեկշիռ, զբաղվել օրենքով սահմանված տեսակների ձեռնարկատիրական գործունեությամբ, իր կանոնադրական նախատակների իրականացման համար ինքնուրույնաբար տնօրինել ձեռնարկատիրական գործունեության հետևանքով ստացված շահույթը և այլն: Ընդամենը ձեռնարկատիրական գործունեության միջոցով հիմնարկի ստացած շահույթը հնարավոր է հաշվառել և օգտագործել առանձին: Դա հնարավոր է անել, օրինակ, յուրաքանչյուր տարի վերադասին եկանուտների ու ծախսերի արտաքյուջետային նախահաշիվ ներկայացնելով՝ գանձապետարանում բացված արտաքյուջետային հաշվեհամարի օգտագործմամբ:

<sup>6</sup> Նույն տեղում:

Պետական հիմնարկի կազմակերպահրավական ձև ունեցող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող կրթական և գիտական հաստատությունների իրավական կարգավիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության դադարեցման կարգը օրենքի մակարդակով նորմատիվ իրավական կարգավորման ենթարկելը պայմանավորված են հետևյալ հանգամանքներով:

Այդ հաստատությունները իրավաբանական անձի դերով հանդես եկող պետական մարմնի՝ կրթական և ոչ առևտրային բնույթի այլ գործունեության իրականացմանը կոչված կազմակերպություններ են, ուստի նաև՝ այդ պետական մարմնի ամբողջական համակարգի բաղադրիչներ: Այս հիմքով դրանք ևս պետական մարմիններ են, իսկ դրանցում ծառայողները՝ պետական պաշտոնատար անձինք: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «...Պետական և տեղական ինքնակատավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Այդ կազմակերպությունների գործառումը ապահովվում է նաև դրանցում համապատասխան պաշտոններ քրաղեցնող և աշխատանք կատարող ֆիզիկական անձանց իրավունքների և պարտականությունների իրականացմանք, իսկ ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի հմապերատիվ պահանջների համաձայն՝ բացառապես սահմանվում են օրենքով<sup>7</sup>:

Պաշտպանության նախարարության համակարգում գործող գիտական և կրթական կազմակերպությունները պետական հիմնարկի կազմակերպական-իրավական ձևով ստեղծելու նպատակահարմարությունը, մասնավորապես, պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

<sup>7</sup> Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն (Փոփոխություններով)», հոդ. 5, 83.5 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>), նաև՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ 2002 թ, ապրիլի 3-ի հմ. ՀՕ-320 օրենքը, հոդ. 9, կետ 4 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64495>):

ա) ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ՝ հիմնարկի իրավական վիճակով գործող գիտական և կրթական հաստատությունների օպտիմալ տնտեսավարման անհրաժեշտություն.

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետից բխում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության հիմնական գործառույթը ՀՀ Կառավարության լիազորությունների շրջանակում իր մասով պաշտպանության իրականացման ապահովումն է, որի նպատակով պաշտպանության նախարարությունը ՀՀ անվտանգության, պաշտպանության և տարածքային ամրողականության, նրա սահմանների անձեռնմխելիության գործառույթներ իրականացնող պետական մարմինների գործունեության համադրմամբ պետք է նշակի համապատասխան փաստաթրեթ, հետամուտ լինի դրանց պահանջների կատարմանը, կառավարի իր ենթակայությամբ գործող համակարգը, ապահովի նյութական միջոցների արդյունավետ և օպտիմալ ու նպատակային ծախսումը, համագործակցի հայստանյան ու օտարերկրյացերատեսչությունների ու կազմակերպությունների հետ և այլ<sup>8</sup>:

Այս ամենն անհնար է առանց համապատասխան մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող կադրային ու գիտական ներուժի գործադրման: Այդ ներուժի ձևավորումն ու զարգացումն ապահովող գիտակրթական գործունեությունը պաշտպանության նախարարության՝ վերը նշված հիմնական գործառույթի կարևոր ենթագործառույթ է: Դրա հետ մեկտեղ, այդ ենթագործառույթը որոշակիորեն առանձնացված է ու յուրահատուկ, ուստի պետք է իրականացվի որոշակի առանձնացված կերպով՝ պետական մարմին պաշտպանության նախարարության հանակարգում գործող և, միևնույն ժամանակ, նրա օրգանական բաղադրիչը համարվող կազմակերպության միջոցով: Բացի այդ, դիտարկվող/նշված այդ ենթագործառույթն իր առանձնահատկությունների բերումով հիմնական գործառույթի համեմատությամբ շատ ավելի սերտ և ինտենսիվ կերպով է առնչվում քաղաքացիական հարաբերությունների ոլորտին: Ըստ էության, դրա ապահովումը հնարավոր չէ պատկերացնել առանց այդ հարաբերությունների մեջ ակտիվ և լիարժեք կերպով ներգրավման: ՀՀ գործող օրենսդրության ընձեռած հնարավորությունների սահմաններում

<sup>8</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)», հոդ. 89, կետ 6 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>):

որպես պաշտպանության նախարարության համակարգի օրգանական բաղադրիչ, և, միևնույն ժամանակ, որոշակի առանձնացված կերպով գործելու համար դիտարկվող ենթագործառույթը կարող է իրականացվել պետական հիմնարկի իրավական վիճակ ունեցող կազմակերպության միջոցով: Այդ կերպ հնարավոր կրառնա նաև քաղաքացիական շրջանառության մեջ վերջինիս լիարժեք ներգրավումը: Ասվածը հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի դրույթներով,

բ) ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում հիմնարկի իրավական վիճակով գործող գիտական և կրթական հաստատությունների գիտակրթական գործունեությունը.

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքից բխում է, որ ռազմական կրթական գործունեություն իրականացնող հաստատությունների բարձրագույն մասնագիտական և հետրուիհական կրթական ծրագրերով ստվորողները՝ կուրսանտները, ունկնդիլները, այդունկտները և այլն, զինծառայողները են: Զինծառայողներ կարող են լինել նաև այդ հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմի այն ներկայացուցիչները, որոնք դասավանդում են համապատասխան մասնագիտական առարկաներ կամ զբաղվում են ռազմագիտական հետազոտություններով: Բացի այդ, նշված հաստատությունների զինծառայողներից բաղկացած անձնակազմը զինվորական ծառայության ոլորտի հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն պետք է գործի միանձնյա զինվորական ենթակայության համակարգում, հակառակ պարագայում հնարավոր չի լինի ապահովել նրանց՝ որպես զինծառայողների պարտականությունների կատարումը և իրավունքների երաշխավորումը, ինչպես նաև զինվորական կարգապահությունը և ենթակարգությունը: Ուստի այդ հաստատությունների ղեկավարման ու կառավարման մարմինները պետք է գործնեն զինծառայողների միջոցով: Խսկ զինվորական ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որն իրականացվում է պետական մարմիններում:

## 2. Զինվորական հաստիքներ ունեցող իրավաբանական անձ

Նախկինում ՀՀ գիտակրթական հաստատություններն ունեին պետական հիմնարկի կարգավիճակ: Ցիշտ է, նրանց հնարավորությունները վերը ներկայացված օրենսդրական զարգացումներով երաշխավորվող ծավալներից

շատ ավելի փոքր էին, սակայն եղած փորձի համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ, այնուամենայնիվ, պետական հիմնարկի իրավական վիճակով գիտակրթական կազմակերպության ստեղծման ու գործառման հնարավորություններն զգալի չափով սահմանափակ կլինեն նույնիսկ առաջարկվող տարրերակի պարագայում։ Այդ պատճառով տարիներ առաջ ոլորտային քաղաքականության նպատակների ու խնդիրների իրագործման ավելի օպտիմալ տարրերակների որոնումը հանգեցրեց իրավաբանական անձի կարգավիճակով ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման գաղափարին։

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է նաև պետական գիտակրթական կազմակերպությունների իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության վերակազմակերպման և լուծարման կարգը, ժամանակին զգալի առաջադիմական քայլ է եղել ոլորտի հարաբերությունների կարգավորման և պետության գիտակրթական քաղաքականության նպատակների ու խնդիրների կատարման, գիտակրթական կազմակերպությունների կայացման ու զարգացման գործում<sup>9</sup>։ Մասնավորապես՝ այդ օրենքի ընդունմամբ նման կազմակերպությունների ֆինանսական միջոցները այլևս չեն համարվում գանձապետական համակարգի միջոցներ, նրանք հնարավորություն ստացան բանկերում հաշիվներ բացելու և ձեռք բերելու սեփականություն, որն առանձնացված էր հիմնադրի (կառավարության) սեփականությունից։

Սակայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտը և ճկունությունը բավարար չեն արագորեն զարգացող և նորանոր պահանջներ առաջարկող գիտակրթական ոլորտի ներկայիս պահանջմունքները բավարարելու համար։ Օրենքը նախատեսված է կարգավորելու պետության ստեղծած գրեթե բոլոր՝ շատ լայն սպեկտրի ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, ինչը հնարավորություն չի տալիս հաշվի առնելու ոլորտային առանձնահատկությունները։ Ուստի այդ օրենքով հնարավոր չէ բավարար արդյունավետությամբ կարգավորել գիտակրթական գործունեությունն ինչպես առհասարակ, այնպես էլ պաշտպանական ոլորտում։

<sup>9</sup> Տես «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ 2001 թ. հոկտեմբերի 23-ի հմ. ՀՕ-248 օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67582>):

Ասվածից ակնհայտ է դառնում, որ անհրաժեշտ է ընդունել պաշտպանական ոլորտի գիտակրթական հաստատությունների կազմակերպահրավական վիճակը և այլ գույքային հարաբերությունները կանոնակարգող նոր օրենք:

Եթե պաշտպանական ոլորտի գիտակրթական հաստատություններին վերապահվի իրավաբանական անձի կարգավիճակ, ապա պետական իիմնարկի համեմատությամբ էապես կիշտանա դրանց գործառումը ինչպես բուն կրթական, այնպես էլ քաղաքացիափական և հարկային հարաբերությունների ոլորտներում, նկատելի չափով դյուրին կդառնան դրանց ներպետական ու միջազգային համագործակցությունն ու ինտեգրումը, հնարավոր կիխնի անհրաժեշտ չափով պահպանել դրանց ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները:

Օրոշակի ինքնուրույն գույքային իրավունքներով իրավաբանական անձի կարգավիճակը պաշտպանական ոլորտի գիտակրթական հաստատություններին հնարավորություն կտա լինելու ավելի ճկուն, մասնավորապես՝ օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում գիտական գործունեությամբ զբաղվելու նաև դրամաշնորհների միջոցով։ Այս դեպքում հնարավոր կդառնա նաև դրանց լիարժեք (չափավոր ակադեմիական ազատություններով) ինտեգրումը «Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին» (ԵԲԿՏ), գիտակրթական հաստատությունների որոշակի ինքնավարության և ակադեմիական ազատությունների հաստատումը, դրանցում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ճկուն ու անցնցում ներդրումը և կիրարկումը։

Միևնույն ժամանակ, դրանց՝ որպես իրավաբանական անձանց սեփականության իրավահարաբերությունները պետք է որոշակիորեն սահմանափակվեն, ինչը պայմանավորված է սպառազինության և այլ ռազմական գույքի՝ բացառապես պետական սեփականություն լինելու սկզբունքով։

Հարկ է նշել, որ այս տարրերակն ընտրելու պարագայում անհրաժեշտ կիխնի լուծել մի շարք պրոբլեմներ։

Առաջինը զորամասի կարգավիճակ չունեցող այդ հաստատություններում զինվորական ծառայության և զինվորական ենթակարգության ապահովումն է, ինչը, մեր կարծիքով, հնարավոր է դրանցում զինվորական ծառա-

յուրյան հաստիքների սահմանմամբ: Այդ դեպքում պետք կլինի զգալի չափով վերանայել զինվորական ծառայություն անցնելու կարգին վերաբերող օրենսդրությունը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այս հարցը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի, և միայն համակարգված հետազոտությունների հիման վրա հնարավոր կլինի հանգել վերջնական եզրակացության:

Երկրորդը նշված հաստատությունների գործառությունը իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևով կազմակերպելու պարագայում զինվորական ծառայության բաղադրիչով պայմանավորված միանձնյա ենթակարգության համակարգ ներառող պետական կառավարման և օրենսդրությամբ նախատեսված ինքնավարության ու ակադեմիական ազատությունների միջև առաջացող հակասությունն է, որի պատճառը գործող օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների համար սահմանված ընտրովի հիմունքներով կողեզիալ կառավարումն է: Այս պրոբլեմը թերևս հնարավոր կլինի լուծել պաշտպանական ոլորտի գիտակրթական հաստատությունների վերաբերյալ միանգամայն նոր օրենսդրական կարգավորումների սահմանմամբ և գործող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների ու լրացումների կատարմամբ:

Երրորդը ՀՀ միջազգային պարտավորությունների ապահովումն է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող գիտակրթական հաստատության սնանկացման և, որպես դրա հետևանք՝ լուծարման պարագայում:

«Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համար զինվորական կադրերի պատրաստման մասին» 2005 թվականի հունիսի 23-ի համաձայնագրով, մասնավորապես, Կողմերը պարտավորվում են միջյանց համար արտոնյալ կամ անհատույց հիմունքներով պատրաստել զինվորական կադրեր՝ իրենց միջոցների հաշվին հոգալով ուսուցման և կեցության ծախսերը<sup>10</sup>: Նշված հաստատությունների գործառումն իրավաբանական անձի կազ-

<sup>10</sup> Տես «Соглашение «О подготовке военных кадров для государств-членов Организации Договора о коллективной безопасности»». Москва , 23 июня 2005 г. ([http://www.law-russia.ru/texts/legal\\_428/doc428a328x473.htm](http://www.law-russia.ru/texts/legal_428/doc428a328x473.htm)):

մակերպական-իրավական ծևով կազմակերպելու դեպքում դրանց սնամ-կացումը չի բացառվում, ինչը կխոչընդոտի հիշյալ միջազգային պայմանագրով նախատեսված՝ ՀՀ միջազգային պարտավորությունների իրականացմանը։ Ուստի անհրաժեշտ է նոր օրենքի նախագծում սահմանել մեխանիզմներ, որոնք հստակ տարանջատման կենթարկեն սեփականության և այլ գույքային իրավահարարերություններն ու հսկողության ընթացակարգերը։

Քննարկվող հարցի վերաբերյալ որպես նախադեպ կամ կարգավորման փորձ կարելի է նշել ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի ««Հայաստանի Հանրապետության Ռատիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության Ռատիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 1791-Ն որոշումը<sup>11</sup>։ Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ այս որոշումը սույն հոդվածում դիտարկվող պրոբլեմները լուծելու այնքան էլ հաջող տարբերակ չէ, քանի որ դրանով փորձ է արվում արդյունքի հասնել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի մի շարք հայեցակարգային պահանջները խախող և/կամ անտեսող, ընդ որում՝ ավելի նվազ իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի ընդունմամբ։

Պաշտպանական ոլորտի գիտակրթական հաստատությունները պետական հիմնարկի կամ իրավաբանական անձի կարգավիճակով ձևավորելու պարագայում դրանց օրենսդրական կարգավորման առանձնահատկություններով պայմանագրված վերոհիշյալ բացերը լրացնելու, ինչպես նաև դրանց զարգացման նախադրյալներ ու հնարավորություններ ստեղծելու յուրօհնակ համապիտանի գրձիք ու հարքակ կարող են դառնալ այլ հաստատությունների զարգացման համար ստեղծվող նպատակային կուտակային կապիտալի կառավարման հասուն գիտակրթական հիմնադրամ-

<sup>11</sup> Տես ՀՀ Կառավարության 2006 թ. նոյեմբերի 9-ի ««Հայաստանի Հանրապետության Ռատիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության Ռատիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 1791-Ն որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76983>):

ները, որոնք կարող են լինել ինչպես պետական, այնպես էլ պետության մասնակցությամբ: Անշուշտ, ավելի ճկուն կլինեն պետական մասնակցությամբ հիմնադրամները: Այդ հիմնադրամները, որոնք արևմտյան մի շարք երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում կիրառվում են վերոհիշյալ նպատակներով, ըստ էության, զգալի չափով ապահովում են գիտակրթական հաստատությունների բնականոն գործունեությունը<sup>12</sup>:

Նման հիմնադրամները գործում են որպես գիտակրթական հաստատությունների երկարաժամկետ նորամուծական զարգացման ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմներ: Դրանք կուտակում են երկարաժամկետ նպատակային կապիտալ, որից ստացված եկամուտները տրամադրվում են կրթական ծրագրերի, գիտական հետազոտությունների, նյութատեխնիկական բազայի զարգացման և այլ խնդիրների լուծման համար:

Այդ հիմնադրամների գործունեությունն իրականացվում է հետևյալ սխեմայով: Բարեգործները միջոցներ են հատկացնում գիտակրթական հաստատության զարգացման համար և այդ կերպ ձևափորում են նպատակային կապիտալ, որը ներդրվում է ֆոնդային շուկայում, անշարժ գույքի մեջ կամ որպես դրամական ավանդ դեպոզիտների վրա: Գիտակրթական հաստատության ֆինանսավորումը կատարվում է ներդրված նպատակային կապիտալից ստացվող եկամուտների հաշվին, իսկ նպատակային կապիտալ ինքը մնում է անձեռնմխելի: Միևնույն ժամանակ, հիմնադրամները կարող են նաև դրամաշնորհներ ստանալ ու նպատակային կերպով ծախսել գիտակրթական հաստատության զարգացման և կանոնադրական խնդիրների լուծման համար:

Մասնավորապես՝ պետական հիմնարկի կարգավիճակով գիտակրթական հաստատությունների ստեղծման պարագայում առաջարկվող հիմնադրամները կլուծեն դրանց քաղաքացիական սուբյեկտայնության բացերով պայմանավորված սահմանափակումները, ինչպիսին է, օրինակ, դրամաշնորհներ ստանալու անհնարինությունը: Իսկ իրավաբանական անձի կարգավիճակով գիտակրթական հաստատությունների ստեղծման պարագայում այդ հիմնադրամները կդառնան լրացուցիչ էական ներքերում ապահովագույն պահանջանելիությունը:

<sup>12</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ, «Документы Фонда развития МГИМО» (<http://fund.mgimo.ru/docs.shtml>):

վող մեխանիզմներ: Նման հիմնադրամների ստեղծման նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկել գործող օրենսդրությունը և հարկ եղած դեպքում կատարել համապատասխան փոփոխությունները ու լրացումները:

Այսպիսով՝ ներկայացվող վերլուծությունը հնարավորություն է տալիս ուրվագծելու ՀՀ ՊՆ համակարգի գիտակրթական հաստատությունների կարգավիճակի ձևավորման երկու տարրեր հեռանկարներ: Դրանց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներկայումս որևէ օրենսդրական կարգավորում չունեցող այս հարցը հնարավոր է լուծել բացառապես նոր օրենքի ընդունմամբ՝ անկախ այդ հաստատությունների իրավական վիճակի ձևակերպման առանձնահատկություններից: Ընդունի այս հարցի լուծումը կենսական նշանակություն ունի պաշտպանական կրթության և գիտության զարգացումն ապահովելու համար:

Մեր կարծիքով՝ նշված նպատակների և խնդիրների կատարման համար անհրաժեշտ է, ընտրելով վերը նշված տարրերակներից մեկը, ընդունել «Պաշտպանական գիտակրթական հաստատությունների մասին» ՀՀ օրենք և համապատասխան փոփոխություններ կատարել ոլորտին առնչվող, այդ թվում՝ «Կրթության մասին» և «Քարձրագոյն և հետքուհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ օրենքներում:

Օրենքի ընդունմամբ կապահովվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ՀՀ Կառավարության լիազորությունների շրջանակում ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահված՝ ՀՀ անվտանգության, պաշտպանության և տարածքային ամբողջականության, նրա սահմանների անձեռնմխելության պահպանման գործառույթներ իրականացնող պետական մարմինների գիտական և կրթական գործունեության ոլորտներում լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը և մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին: Այս հարցում էական նշանակություն կարող է ունենալ պաշտպանական գիտակրթական հաստատությունների զարգացման համար նպատակային կուտակային կապիտալի կառավարման հատուկ գիտակրթական հիմնադրամների ստեղծումն ու գործառույթը:

Մասնավորապես՝ այդ օրենքի ընդունումը հնարավորություն կտա տվյալ

հաստատությունների գործառումը պետական պաշտպանական իիմնարկի կամ իրավաբանական անձի կարգավիճակով կազմակերպելու միջոցով օպտիմալ հարաբերակցությամբ համադրելու զինվորական ծառայության բաղադրիչով պայմանավորված միանձնյա ենթակարգության համակարգ ներառող պետական կառավարումը և օրենսդրությամբ նախատեսված ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները, ինչպես նաև տվյալ ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը:

ՀՀ ՊՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ 2013 Թ.  
ԾՐԱԳԻՐ\*

Հ. Ա. ՔՈԹԱՆՁՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական զիվուրյունների  
դոկտոր (ՈԴ), ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի  
Ազգային ռազմավարական հետազուրյունների ինստիվուտի  
հրավիրված առաջակար պրոֆեսոր, ՀԱՊԿ-ի զիվափորձաքննական  
խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի պետ, Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պարմական  
զիվուրյունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի պետի տեղակալ-  
վերլուծական կենսդրունի պետ, Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, կապիկան,  
ԱՌՀ-ի ֆինանսական մասի պետ, ԱՌՀ-ի հայցորդ

#### 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը իր պաշտպանական անվտանգության ապահովումը իրագործում է երկու եղանակով՝ պաշտպանական համակարգի զարգացմանը և միջազգային համագործակցությամբ։ Պաշտպանական համակարգի զարգացման հիմնական գործիքը 2005 թ. մեկնարկած պաշտպանական բարեփոխումներն են՝ նպատակաուղղված ինչպես ժամանակակից ու հեռանկարային սպառնալիքների հետմանաը մշտապես պատրաստ համակարգի ստեղծմանը, այնպես էլ տվյալ դրույտ միջազգային պարտավորությունների կատարման կարողության ապահովմանը։ Միջազգային համագործակցությամբ անվտանգության ապահովումը ենթադրում է հավասարակշռված արտաքին քաղաքականության և համագործակցության զարգացում այն բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց շահերը չեն հակառակ ՀՀ ազգային շահերին։ Տվյալ եղանակները սերտորեն փոխկապված են։

Պաշտպանական բարեփոխումները ներառում են ԶՈՒ-ի կենսագործունեության բոլոր ոլորտները, ուստի և այս կամ այն չափով առնչվում են ՀՀ բոլոր գերատեսչությունների ամենօրյա գործունեության հետ, իսկ դա նշանակում է,

\* Հրապարակվում է կրճատումներով։

որ բոլոր գերատեսչությունների գործունեությունը պետք է լինի համակարգված և խստագույն փոխհամաձայնեցված: Հետևաբար անհրաժեշտություն է դառնում իրենց գործունեությամբ պաշտպանական անվտանգության առնչվող բոլոր գերատեսչությունների դեկավար կազմում ռազմավարական որոշումներ պատրաստողների, ընդունողների ու կատարողների տեսակետների, մոտեցումների և ընդիհանրապես ռազմավարական մտածողության միօրինակության ապահովումը: Դրա լավագույն միջոցն է այդ ռազմավարական օղակի կաղըերի միանական ուսուցման կազմակերպումը:

Միջազգային պարտավորությունների հաջող կատարման գրավականը արևմտյան և ուսուաստանյան պաշտպանական համակարգերի հետ հայրենական համակարգի բարձր մակարդակի գործակցելիության ապահովումն է, ինչը ևս ենթադրում է համապատասխան զիտելիքներով և այդ զիտելիքները պրակտիկայում կիրառելու կարողությամբ օժտված դեկավար կաղըերի պատրաստում:

Վերը շարադրվածից ակնհայտորեն երևում է, թե ՀՀ պաշտպանական անվտանգության ապահովման համար որքան մեծ նշանակություն ունի Հայաստանում միջազգային առաջավոր չափանիշներին համապատասխանող բարձրագույն պաշտպանական-անվտանգության կրթության կազմակերպումը:

Այդ խնդրի լուծմանն է նպատակառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության կազմում Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի (ՊԱՀՀՀ) ստեղծումը: Այդ համալսարանը հնարավորություն կտա ապահովելու,

• *Աերին անվանագության բնակավառում՝* պաշտպանության նախարարության շորջ համախմբելու պաշտպանական անվտանգության խոնդրներին առնչվող բոլոր գերատեսչությունների մասնակիտական ներուժը, ստեղծելու պաշտպանական անվտանգության ոլորտում ռազմավարական որոշումներ մշակողների, ընդունողների և կատարողների համասեռ մտավոր-գործունեական միջավայր,

• Հայաստանի Հանրապետության հետ ԱՄՆ-ի ռազմավարական երկխոսության դադարեցման (2005 թվականից) պայմաններում մասամբ լրացնելու այդ բացը՝ ԱՄՆ-ի իշխանություններին ռազմավարական քաղաքական ճշակումներով և ռազմավարական տրամաշափի կաղըերով սնող կառույցի՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի հետ ՀՀ գործընկերության ակադե-

միական կամրջի ծևափորմամբ: Տվյալ մասնագիտական համագործակցությունը, որը տեղի է ունենում Հայաստան-Ռուսաստան ու ՀԱՊԿ և Հայաստան-ԱՄՆ ու ՆԱՏՕ համագործակցային հաշվեկշռի շրջանակներում, կնպաստի ՀՀ պաշտպանական համակարգի դիմամիկ արդիականացմանը և այդ գործընթացը դեկավարող նոր սերմնի կադրերի պատրաստմանը:

Ըստ այդ՝ 2003 թ. ՀՀ Պաշտպանության նախարար, ՀՀ գործող Նախագահ Ս. Սարգսյանի հանձնարարությամբ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում ուսումնասիրվել է ՊԱՀ-ի ամերիկյան մոդելը՝ ՀՀ-ում տեղայնացմամբ ՊՆ կազմում նմանատիպ կազմակերպություն ստեղծելու համար: Համալսարանի ստեղծմամբ պաշտպանության նախարարությունը կդառնա անվտանգության հարցերով գրաղվող բոլոր գերատեսչությունների ներգրավմամբ ռազմավարական մշակումների, ռազմավարական օղակի դեկավար կադրերի պատրաստման, ռազմավարական որոշումներ ընդունող պաշտոնների նշանակվող շրջանավարտների մասնագիտական համագործակցության հանգուցակետ:

Որպես այդ բարդ գործընթացի մեկնարկային փուլ՝ 2005 թ. ստեղծվեց ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ), որը, լինելով քաղաքագիտական-անվտանգության ուղեղային առաջին ու ներկայումս միակ պետական կենտրոնը, դարձավ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դրկտրին» միջգերատեսչական մշակման մերոդարանության կերտողն ու գիտական համադասողը: 2007 թվականից ԱՌՀԻ-ն կատարում է տարածաշրջանային և ֆունկցիոնալ հետազոտություններ՝ Հայաստանի ռազմաքաղաքական դեկավարությանը տրամադրելով արտաքին մարտահրավերների ու սպառնալիքների գնահատումներ և դրանց չեղորացմանը վերաբերող ռազմագրություններ: ԱՌՀԻ-ն հրատարակում է երկու գիտական պարբերական՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը և դրա հավելված «Աշխատանքային տեսրերը», որոնցում գետեղվում են ինստիտուտի վերլուծաբանների, Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի Գլխավոր շտաբի, այլ գերատեսչությունների, գիտական հաստատությունների, ինչպես նաև արտասահմանյան առաջատար մասնագետների մշակումները:

Վերջին տարիներին ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն, համագործակցելով Հարվարդի համալսարամի և ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի հետ, մշակել է ԱՌՀԻ-ի կերպարագիտմամբ Պաշտպանական ազգային համալսարանի՝ ՀՀ ՊՆ

առաջավոր գիտակրթական հաստատության ստեղծման նախագիծ՝ ճանապարհային քարտեզով հանդերձ:

Կերպարփոխման ճանապարհին կատարված կարևոր փուլանիշային քայլերից է 2009 թվականին ԱՌՀԵ-ում հետքուհական կրթության օդակի՝ ասպիրանտուրայի գործարկումը, ինչպես նաև քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ասպարեզում թեկնածուական և դոկտորական գիտական աստիճաններ շնորհող՝ Հայաստանում միակ մասնագիտական խորհրդի ձևավորումը: Տվյալ մասնագիտական խորհրդի շնորհիվ ՀՀ պաշտպանության նախարարությունը դարձել է անվտանգային քաղաքագիտության զարգացման համար անհրաժեշտ միջավայր՝ ձևավորող, մասնավորապես՝ քաղաքական դաշտում որոշումներ մշակող գիտական որակավորմանը քաղաքագետների պատրաստման հաստատություն:

ՀՀ Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի նախատեսվող նյութ կարևոր գործառույթներից մեկը ուազմակարական ֆորումների անցկացումն է: Ֆորումները այն հարթակն են, որոնց միջոցով միավորվում է քաղաքականություն մշակողների մասնագիտական ներուժը: Դրանք նաև հնարավորություն են տպիս հաղթահարելու պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման և որոշումների նախագծման պատրաստման գործում մինչ այժմ պահպանված խորհրդային «ապարատային» ձևաչափի անկատարությունը: Արդեն ձեռք է բերվել ֆորումների անցկացման փորձ: Այսպես. 2011 թ. մայիսին ԱՌՀԵ-ի և ՀԱՊԿ-ի քարտուղարության կողմից կազմակերպվեց ՀԱՊԿ-ի հայեցակարգային-ուազմակարական փաստարդերի մշակմանը նվիրված միջազգային ուազմակարական գիտաժողով, որին մասնակցեցին ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ուազմակարական հետազոտությունների կենտրոնների առաջատար մասնագետներ: 2011 և 2012 թթ. նոյեմբերին ԱՌՀԵ-ն կազմակերպվեց ֆորումներ, որոնք ունեին երկու՝ քաղաքական-դիվանագիտական և փորձագիտական քաղադրիչներ, քանի որ դրանց միաժամանակ մասնակցում էին Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ ու հավատարմագրված դեսպաններ և հայրենական ու միջազգային հեղինակավոր փորձագետներ, այդ թվում՝ Հարվարդի, Բրաունի, Օքսֆորդի, Ստամբուլի «Քաղիք Հաս» և Երուսաղեմի համալսարաններից, ամերիկյան Արտաքին քաղաքականության խորհրդից և «Չարեմ հառուցից», Քառնեզիի հիմնադրամի Մոսկվյան կենտրոնից:

Քաղաքականության մշակման կարևոր գործիքներից է ուազմակարական խաղը: 2011 թ. ԱՌՀԵ-ն նախաձեռնեց ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ուազմակարական խաղերի

մեքողաբանության ուսումնափրություն, որի հիման վրա 2012 թ. մայիսին Հայաստանում առաջին անգամ կազմակերպեց ուսումնավարական անվտանգային խաղ: Պաշտպանական համալսարանի կազմում նախատեսվում է ստեղծել ուսումնավարական խաղերի կենտրոն, ինչը ենթադրում է այդ դրույթ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հետ համագործակցության սերտացում, այդ թվում՝ այնտեղ հայաստանյան մասնագետների վերապատրաստում և այնտեղից դասախոսությունների համար մասնագետների հրավիրում:

2013 թ. նոյեմբերին կմեկնարկեն միջգերատեսչական պաշտպանական-անվտանգային վերապատրաստման դասընթացները՝ նախատեսված անվտանգային խնդիրներին առնչվող գերատեսչությունների միջին և բարձր օրակի պաշտոնյաների համար: Տվյալ դասընթացների համար ԱՌՀ-ի կողմից պատրաստվում է փորձագիտական-ուսումնական երկիատորյա ձեռնարկ՝ նվիրված Հայաստանի պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխումներին՝ բոլոր ոլորտների ընդգրկմամբ: Ձեռնարկը ներառում է 2008–2012 թթ. «Հայկական բանակ» ուսումնագիտական հանդեսի մասնագիտացված համարների բենատիկ հոդվածների ընտրանին: Ավարտին է մոտենում նաև ուսումնավարական ուսուցման մյուս գիտառուսումնական ձեռնարկի կազմնամաս աշխատանքը՝ պաշտպանական-անվտանգային տերմինների եռալեզու (հայերեն-ռուսերեն-անգլերեն) բացատրական բառարանը, որն էական նշանակություն կունենա ինչպես Հայաստանի Զինված ուժերի զարգացման, այնպես էլ ուսուական և արևմտյան համակարգերի հետ մեր պաշտպանական-անվտանգային համակարգի գործակցելիության մակարդակի բարձրացման համար: Բառարանը Պենտագոնի բացատրական, «ՆԱՏՕ-Ռուսաստան» մասնագիտական տերմինների բառարանի և «Հայկական բանակ» ուսումնագիտական հանդեսում համարից համար 17 տարի տպագրվող եռալեզու բառարանի համակարգման արգասիքն է: Որպես 2012 թ. ձեռնարկված փորձի շարունակում և զարգացում՝ 2013 թ. նախատեսվում է բառացանկի էական ընդլայնման՝ 12000 հասկացություն ու դրանց տերմիններ պարունակող պաշտպանական-անվտանգային հայերեն-ուսերեն-անգլերեն երկրորդ բառարանի կազմում:

Պաշտպանական ազգային (ինտագրուտական) համալսարանի ծրագիրը մշակվել, փորձաքննվել և լրամշակվել է Հարվարդի Զ. Քենեդիի անվան Պետութենագիտության դպրոցում, Թաֆտսի համալսարանի Դիվանագիտության և իրավունքի Ֆլետչերյան դպրոցում, ԱՄՆ-ի ՊԱՀ-ում, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ներգրավմամբ:

## 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը /27.11.2008 թ. ՀՕ-198-Ն/, հոդված 4-ի 8-րդ կետի 1,2,6,10 ենթակետեր	Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպության խաղաղ ժամանակ ներառում է՝ ուղղական բաղադրականության հիմնական ուղղությունների մշակում, ուղղմական սպառնալիքի կանխատեսում ու գնահատում, միջազգային համագործակցություն, ուղղական գիտության զարգացում և ուղղմական ուսուցում
«ՀՀ ուղղմական դրվագինը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը /25.12.2007թ. ՆՀ-308-Ն/ կետ 6, կետ 9-ի 2,4 ենթակետեր	Հայաստանի Հանրապետության ուղղմական անվտանգության ապահովության կարևորագույն գործառույթներից է և ներառում է՝ սպառնալիքների ու վտանգների ժամանակին բացահայտում ու գնահատում, դրանց հասունացման կանխատեսում, կանխում, կասեցում ու չեղործացում: Հայաստանի Հանրապետությունն իր ուղղմական անվտանգության ապահովման նպատակով կիրառում է պետության ուղղմական անվտանգության համակարգը՝ պետության ամբողջ քաղաքական, տնտեսական և ուղղմական ներուժի համարժմանը և կենտրոնացված ու նպատակասուրյալած դեկավարմանը: Այդ համարժման հիմնական ուղիներն են՝ պաշտպանության բնագավառում համալրումն միջազգային համագործակցության խորացումը, միջազգային առաջատար փորձի ձեռքբերումն ու ներդրումը՝ ի նպատակ Հայաստանի Հանրապետության ուղղմարադարձական ու ուղղմական հղորացման, միջազգային և տարածաշրջանային ուղղմարադարձական իրադրության զարգացումների վերաբերյալ սույն տեղեկատվության ձեռքբերումը, Հայաստանի Հանրապետության ազգային, ուղղմարադարձական և ուղղմական շահերին ու խնդիրներին այդ զարգացումների առնչության հոսանք և արյունավետ կանխատեսումը, ուղղմական սպառնալիքների բացահայտումն ու դասակարգումը, դրանց համարժեք արձագանքման նպատակով անհրաժեշտ միջոցների ձևարկումը, Հայաստանի Հանրապետության ուղղմարադարձական ու ուղղմական շահերի պաշտպանության և խնդիրների լուծման ապահովումը:
ՀՀ ՊՆ 07.01.2007թ. թիվ 5 հրաման, կետ 7	ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի նպատակային խնդիրներն են՝ ուղղմավարական հետազոտությունների իրականացումը, ՊՆ դեկավար կազմի անվտանգային-պաշտպանական քաղաքականության զծով վերապատրաստումն ու ուսուցումը:

### 3. ՆՊԱՏԱԿ/ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտում գործող բոլոր գերատեսչությունների մասնագիտական ներուժի համախմբում ՊՆ-ի շուրջ՝ ռազմավարական գիտակրթական միջգերատեսչական գործունեության մեջ ներգրավմանք,
- պաշտպանական բարեփոխումները դեկավարող, ժամանակակից գիտելիքներով զինված և այդ գիտելիքները պրակտիկայում կիրառելու հմտությամբ օժտված նոր սերնդի կաղընդի պատրաստման կրթական հաստատության փուլային ստեղծում:
- նպաստում պաշտպանական-անվտանգային ոլորտին առնչվող բոլոր գերատեսչությունների ներդաշնակ գործունեության ապահովմանը,
- պաշտպանական-անվտանգային ոլորտում ՀՀ միջազգային ակադեմիական համագործակցության խորացում,
- ՀՀ կրթական բարեփոխումների գործընթացում ՊՆ ռազմավարական դերի ապահովում:

### 4. ԾՐԱԳԻՐ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Ծրագրի արտաքին շահառումներն են ՀՀ ռազմաքաղաքական դեկավարությունը՝ ՀՀ Նախագահ, վարչապետ, ՀՀ ՊՆ և այլ գերատեսչությունների բարձրաստիճան դեկավարներ:

### 5. ՄԻԶԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔ/ԵՆԹԱՆՊԱՏԱԿ

ՀՀ ռազմաքաղաքական, ինչպես նաև պաշտպանության նախարարության բարձրաստիճան դեկավարության համար պաշտպանական-անվտանգային հետազոտությունների կատարում:

#### *Որակական ցուցանիշներ*

ՀՀ ռազմաքարական պաշտպանական-անվտանգային շահերին առնչվող գիտակիրառական հետազոտությունների կատարում, համապատասխան գնահատականների և առաջարկությունների ներկայացում:

5.1. Քաղաքականության միջոցառումներ՝ պաշտպանական-անվտանգային հետազոտությունների իրականացման ծառայություններ (ՀՀ փորձագիտական հանրույթ):

##### *5.1.1. ՈՒղղակի արդյունք/ծառայություն.*

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տեսրեր» հավելվածի բողարկում, հատուկ նշանակության վերլուծական գեկուցագրերի ներկայացում:

«Աշխատանքային տեսրերի» 1-2 միացյալ համարում ներկայացվելու է Ծուշիի դերը տարածաշրջանային պատմաքաղաքակրթական գարգացումներում, իսկ «Աշխատանքային տեսրերի» 3-4 միացյալ համարում՝ Աղբբեզանի քաղաքականության ազդեցությունը ՀՀ անվտանգության վրա:

### *Ժամկետային ցուցանիշներ*

ՀՀ բարձրաստիճան դեկավարությանը հետազոտությունների ժողովածուները տրամադրվելու են յուրաքանչյուր կիսամյակ՝ 2013 թ. հունիս և դեկտեմբեր ամիսներին:

#### *5.1.2. ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

Վերլուծական գեկուցագրերի պատրաստում:

### *Որակական ցուցանիշներ*

Վերլուծական գեկուցագրերը պարունակելու են ուսումնասիրվող խնդիրների համակարգային վերլուծություն, համապատասխան եզրակացություն և գիտակիրառական առաջարկություններ: Զեկուցագրերը նպաստելու են ՀՀ ռազմավարական անվտանգային շահերին առնչվող որոշումների ընդունման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

#### *5.2. Քաղաքականության միջոցառումներ՝ պաշտպանական-անվտանգային հետազոտությունների իրականացման ծառայություններ (արտերկրի փորձագիտական հանրույթ):*

#### *5.2.1. ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

Միջազգային գիտաժողովների անցկացմամբ ՀՀ անվտանգային ռազմավարական շահերին առնչվող գարգացումների վերաբերյալ արտերկրի փորձագիտական հանրույթի գնահատականների ստացում:

### *Քանակական ցուցանիշներ*

Երկու միջազգային գիտաժողովի անցկացում:

### *Որակական ցուցանիշներ*

Տարածաշրջանային անվտանգության դինամիկային, ինչպես նաև ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական բաղադրիչի զարգացման պրոբլեմներին և հեռանկարներին նվիրված թվով հիսուն գեկուցումների ներկայացում, ՀՀ և արտերկրի փորձագետների միջև քննարկումներ և փորձի փոխանակում:

### *Ժամկետային ցուցանիշներ*

2013 թ. հունիս և նոյեմբեր

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի գարգացման քաղաքական-անվտանգային ուղենիշներին նվիրված միջազգային ֆորումի անցկացում	Գիտաժողովը Հայաստանի և ՀԱՊԿ-ի անդամ պետությունների փորձագետների մասնակցությամբ քննարկելու է ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի գարգացման հեռանկարները և պրոբլեմները:
Աշխատանքներ	Միջազգային գիտաժողովների անցկացման շափանիշներին համապատասխանող ռեսուրսների ձեռք բերում:
«Տարածաշրջանային անվտանգության դիմամիկան Հարավային Կովկասում» ամենամյա գիտական ֆորումի անցկացում	Գիտաժողովում ՀՀ և արտերկրի առաջատար փորձագետների ներգրավմամբ քննարկվելու են տարածաշրջանային անվտանգության դիմամիկան, գարգացման հնարավոր սցենարները և դրանց ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային ճարտարապետության վրա:
Աշխատանքներ	Միջազգային գիտաժողովների անցկացման շափանիշներին համապատասխանող ռեսուրսների ձեռքբերում:

### 5.2.2. ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔ/ԺԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Միջազգային գիտաժողովի և ամենամյա գիտական ֆորումի արգասիքների տրամադրում ՀՀ ռազմաքաղաքական դեկավարությանը:

#### Քանակական ցուցանիշներ

«Աշխատանքային տեսրեր» հավելվածի երկու հատուկ թողարկումների հրատարակում (յուրաքանչյուր՝ 300 էջ, 200 օրինակ):

#### Որակական ցուցանիշներ

Ժողովածումներում ներկայացվելու են տարածաշրջանային անվտանգության դիմամիկայի և ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական բաղադրիչի գարգացման պրոբլեմների և հեռանկարների վերաբերյալ ՀՀ և արտերկրի փորձագետների հետազոտություններ:

## 6. ՄԻԶԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔ/ԵՆԹԱՆՊԱՏԱԿ 2

Առաջարկած քաղաքագիտության գարգացում:

#### Քանակական ցուցանիշներ

Երկիատոր ձեռնարկի հրատարակում (1000 օրինակ):

Ծուրջ 12000 հասկացություն ու տերմին պարունակող պաշտպանական-անվտանգային հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանի կազմում:

### *Որակական ցուցանիշներ*

ՀՀ ՊՆ ԱՌՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի և ԶՈՒ-ի առաջատար մասնագետների, ակադեմիական հանրության, ինչպես նաև ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների միջև՝ ըստ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման հիմնական բաժինների, դրա արդիականացման ուղիների իմաստավորման և մշակման գործում ավելի քան քառամյա համագործակցության արդյունքներով երկաստոր փորձագիտա-ուսումնական ձեռնարկի հրատարակում, որը Պաշտպանական ազգային (հետագործական) համասարանի համար դասագրքային հիմքի ծևագորման գործում միջզերատեսչական փորձագիտական ներուժը համախմբելու առա-ջին փորձն է:

Ուազմագիտության տարրերը ոլորտներին առնչվող հետազոտությունների իրականացում:

Պաշտպանական-անվտանգային ոլորտում հայերենի տերմինաբանության համակարգված մշակում, հասկացութային համակարգի ընդլայնում և արև-մտյան ու ռուսաստանյան համակարգերի հետ ներդաշնակում:

### *Կապը վերջնական արդյունքի հետ*

Ուազմական քաղաքագիտության զարգացումը պաշտպանական-անվտանգա-յին քաղաքականության մեջ գիտական քաղաքրիչի ապահովմանն ուղղված էական գործոն է: «Հայերեն-ռուսերեն-անգլերեն» պաշտպանական-անվտան-գային տերմինների բացատրական բառարանը ստեղծվում է պաշտպանա-կան-անվտանգային ոլորտում հայերենի տերմինաբանության համակարգված մշակման, հասկացութային համակարգի ընդլայնման և արևմտյան ու ռուսաս-տանյան համակարգերի հետ ներդաշնակեցման, համապատասխան կառույց-ների գործակցելիության ապահովման նպատակով՝ որպես 2012 թ. ձեռնարկված փորձի շարունակում և զարգացում՝ բառացանկի էական ընդլայնմամբ: Էլեկտրոնային տարրերակի ստեղծումը կապահովի բառարանի ավելի մեծ զանգվածայնությունն ու մատչելիությունը:

#### *6.1. Քաղաքականության միջոցառումներ*

Ուազմագիտությանը վերաբերող գիտական տեղեկույթի տարածում:

##### *6.1.1. ՈՒղղակի արդյունք/ծառայություն*

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի համարների մշակում:

### **Քանակական ցուցանիշներ**

Չորս համարների մշակում՝ «Հայկական բանակ» ՈԳՀ 2 միացյալ համարներ, յուրաքանչյուրը՝ 132 էջ ծավալով:

### **Որակական ցուցանիշներ**

Առաջավոր ռազմագիտական մտքի ու փորձի տարածմանը, Զինված ուժերում ռազմագիտական կադրերի պատրաստմանը, ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական դաստիարակությանը նպաստող, ՀՀ ԶՈՒ-ում ընթացող պաշտպանական բարեփոխումները լրացրանող գիտական հոդվածներ:

#### **6.2. Քաղաքականության միջոցառումներ**

Պաշտպանական-անվտանգային հանրույրի համար անհրաժեշտ տերմինաբանական հիմքի ապահովում:

##### **6.2.1. ՈՒղղակի արդյունք/ծառայություն.**

«Հայերեն-ռուսերեն-անգլերեն» պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարանի նշանում:

### **Քանակական ցուցանիշներ**

Բառարանում ընդգրկվելու է շուրջ 12000 տերմին:

### **Որակական ցուցանիշներ**

Տվյալ ոլորտում հիմնական հայերեն տերմինների մշակում՝ ռուսերեն և անգլերեն գործահեռներով և երեք լեզվով տրվող բացատրություններով (ներառյալ՝ ռուսերեն-հայերեն և անգլերեն-հայերեն բառարանները), բոլոր բառացանկերի դասավորում այրենական կարգով և էլեկտրոնային մեկնակերպի ստեղծում՝ հատուկ նշանակած համակարգչային ծրագրի կիրառմամբ:

#### **7. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔ/ԵՆԹԱՆՊԱՏԱԿ 3**

Պաշտպանական ազգային համալսարանի հետազոտական բաղադրիչի ծևափորման նախադրյալների/հիմքերի ստեղծում. բաժինների ծևափորում, ՀՀ ՊՆ ԱՌՀՀ-ի Վերլուծական կենտրոնի վերակազմակերպում, միջազգային կապերի խորացում:

### **Քանակական ցուցանիշներ**

Ներկայումս գործող ՀՀ ՊՆ ԱՌՀՀ-ի Վերլուծական կենտրոնում Ռեսուրսների կառավարման և կիրեռանվտանգության ու Ռազմավարական խաղերի խմբերի ծևափորում, վերլուծական կենտրոնում վերլուծարանների երկաստիճան համակարգի ներդրում, առաջատար գիտակրթական կենտրոնների, այդ թվում՝ Պաշտպանական ազգային համալսարանի (ԱՄՆ), Արտաքին հարաբերությունների խորհրդի (ԱՄՆ), Արտաքին բաղաքականության ամեն-

թիվյան կենտրոնի (ԱՄՆ), Հարվարդի համալսարանի Զ. Քենեդիի անվան Պետութենագիտության դպրոցի (ԱՄՆ), «Չարեմ Հառլի» (ՄԲ), Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի (ՄԲ), Լիոնի համալսարանի Պաշտպանական ու անվտանգային հետազոտությունների կենտրոնի (ՖՀ), ՀԱՊԿ-ի պետությունների ռազմավարական հետազոտությունների կենտրոնների հետ կապերի ընդլայնում:

### *Որակական ցուցանիշներ*

Խսքերը նպաստելու են ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կողմից իրականացվող ռազմավարական անվտանգային հետազոտությունների որակի բարելավմանը, ոլորտային ընդգրկման մեծացմանը՝ նոր մեթոդաբանության կիրառման և նոր ոլորտներում հետազոտությունների իրականացման միջոցով:

### *Կապը վերջնական արդյունքի հետ*

Պաշտպանական ազգային համալսարանի հետազոտական բաղադրիչի ձեւավորման նախադրյալների ստեղծումը պաշտպանական անվտանգային քաղաքականության որակապես նոր մակարդակի գիտական բաղադրիչի ապահովման կարևոր գործոն է:

#### *7.1. Քաղաքականության միջոցառումներ*

Ուսուրանումների կառավարման և կիրեռանվտանգության խմբի ստեղծում:

##### *7.1.1. ՈՒղղակի արդյունք/ծառայություն.*

Ուսուրանումների կառավարման և կիրեռանվտանգության խմբի ստեղծում:

### *Որակական ցուցանիշներ*

Պաշտպանական-անվտանգային ռեսուրսների կառավարման և կիրեռանվտանգության զարգացման հիմնական միտումների մշտագննում և ՀՀ ազգային անվտանգության վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատում, Կիրեռանվտանգության ռազմավարության նախագծի մշակում: Ուսուրանումների կառավարման և կիրեռանվտանգության խմբի ստեղծմամբ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանում կձևավորվեն Կիրեռանվտանգության քաղաքականության ազգային կենտրոնի ստեղծման նախադրյամեր:

##### *7.1.2. ՈՒղղակի արդյունք/ծառայություն.*

Ռազմավարական խաղերի խմբի ստեղծում:

### *Որակական ցուցանիշներ*

Տարեկան առնվազն երկու ռազմավարական խաղերի անցկացում՝ ՀՀ ՊՆ

ԱՌՀԻ-ի Վերլուծական կենտրոնի և դրա կազմում ստեղծված նոր բաժինների նշակումների փորձաքննության նպատակով:

1. Ուղղական խաղերի կազմակերպման մեթոդաբանության ուսումնասիրություն և զարգացում:

2. ՀՀ ՊՆ ստեղծվելիք Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանում կիրառական ուղղական ազգական ուսուցման կենտրոնի ստեղծման նախադրյալների ձևավորում:

## 7.2. Քաղաքականության միջոցառումներ

Վերլուծական կենտրոնի կազմակերպական կառուցվածքի համապատասխանեցում ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի՝ ՊԱ(Հ)Հ-ի կերպավոխման պահանջներին:

### 7.2.1. ՈՒղղակի արդյունաբերականություն

Վերլուծաբանների երկաստիճան համակարգի ներդրում:

#### Որակական ցուցանիշներ

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ներկայումս գործող Վերլուծական կենտրոնի գիտնական-վերլուծաբանների ութ հաստիքներից երկուսի կերպավոխում ավագ գիտնական-վերլուծաբանի հաստիքի:

Ավագ գիտնական-վերլուծաբանը, ոլորտային հետազոտություններից բացի, ԱՌՀԻ-ի պետի տեղակալ-գիտավերլուծական կենտրոնի պետի հետ կատարելու է վերլուծաբանների նշակումների փորձաքննություն և գիտական խմբագրում:

### 7.2.2. ՈՒղղակի արդյունաբերականություն

Պաշտպանական ազգային համալսարանի միջազգային կապերի խորացում:

#### Որակական ցուցանիշներ

Աջակցություն Պաշտպանական ազգային (հետազոտական) համալսարանի կողմից տարեկան առնվազն երկու միջազգային ուղղական փորումների անցկացմանը: Աջակցություն ՊԱ(Հ)Հ-ի գիտնական-վերլուծաբանների՝ օսարերկրյա գիտահետազոտական կենտրոններում վերապատրաստմանը (տարեկան առնվազն երեք նմանատիպ ծրագրերի իրականացում):

ՊԱ(Հ)Հ-ի միջազգային կապերի աշխարհագրության և ինտենսիվության ընդլայնում:

## 8. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔ/ԵՆԹԱՆՊԱՏԱԿ 4

ԱՌՀԻ-ի կարողությունների զարգացում:

#### Քանակական ցուցանիշներ

ՊԱ(Հ)Հ-ի հետազոտական բաղադրիչի կերպավոխման ծրագրով նախատեսված է ԱՌՀԻ-ի անձնակազմի ավելացում շուրջ 20 տոկոսով:

*Որակական ցուցանիշներ*

ՊԱՀ-ի հետազոտական բաղադրիչի ձևավորման համար անհրաժեշտ կարողությունների ստեղծում բնականոն գործունեություն ապահովելու նպատակով:

*Ժամկետային ցուցանիշներ*

2013–2014 թթ.

*Կապը վերջնական արդյունքի հետ*

ԱՌՀԻ-ի կարողությունների գարգացումը՝ երկրորդ մասնաշենքի շինարարություն, նոր հաստիքների համար անհրաժեշտ գույքի և համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ պաշտպանական անվտանգային բաղաքականության գիտական բաղադրիչի արդյունավետության ապահովման համար:

8.1. Քաղաքականության միջոցառումներ

ԱՌՀԻ-ի ենթակառուցվածքների գարգացում:

8.1.1. *ՈՒղղակի արդյունք/ծառայություն*.

ԱՌՀԻ-ի երկրորդ մասնաշենքի կառուցում:

*Քանակական ցուցանիշներ*

Եթեք հարկանի մեկ նոր մասնաշենք, տարածքը՝ 1875 քառակուսի մետր:

*Որակական ցուցանիշներ*

Ժամանակակից չափանիշներին համապատասխանող շինության կառուցում:

8.2. Քաղաքականության միջոցառումներ

ԱՌՀԻ-ի նյութական ռեսուրսային ներուժի գարգացում:

8.2.1. *ՈՒղղակի արդյունք/ծառայություն*.

ԱՌՀԻ-ի նյութատեխնիկական բազայի գարգացում:

*Որակական ցուցանիշներ*

Ժամանակակից պահանջներին համապատասխան արդիականացում:

## **Ի գիտություն ենթակաների և ընթերցողների**

«Աշխատանքային տեսություն» լույս են ընծայվում որպես ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական համբեսի հավելված՝ ընդունված ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեսմանական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակրեն օգտագործված առավել կարևոր աղյուրները:

Հեղինակները պատասխանատու են հողվածներում բերվող փաստերի հավաստության և գաղտնիության պահպանիների պահպաննամ համար:

Հեղինակների դիրքորոշումը պարուսադիր չէ, որ հաճրնենի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիմագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հողվածներում պետք է վերձանված լինեն օգտագործվող հավաքումները:

Զենագրերը հետ չեն վերադարձվում:

Հողվածները հրապարակվում են պարուսադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասսամբ կամ ամբողջությամբ արտասպառմ բույլատրվում է միայն խմբագրության գրափոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

«Рабочие тетради» издаются в качестве приложения к военно-научному журналу «Айакан банак» ИНСИ МО РА, включенному в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

The «Working notebooks» is published as an appendix to the defense-academic journal «Haikakan banak» of the INSS, MoD, RA which is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

Authors should give footnotes for the most important sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of a clear print quality.

Please explain used acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory academic examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

ՀՀ ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՈՐՊԵՍ ՈԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՂԿԱՅՈՒՑԻՉ

Նախագծի գիտական դեկավար՝

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական,  
Ռուսաստանի ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ,

ՊԱՀ-ի ԱՌՀԻ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր (ԱՄՆ),

քաղաքական գիտությունների դոկտոր (Ո-Դ)

գեներալ-մայոր Հ. Ս. Քորանջյան

Պրակի գիտական խմբագիրներ՝

պատմական գիտությունների թեկնածու Բ. Պ. Պողոսյան,

քաղաքական գիտությունների թեկնածու Մ. Ս. Ավելիխյան,

պատմական գիտությունների թեկնածու Գ. Մ. Մանասյան,

պատմական գիտությունների թեկնածու Ա. Բ. Մանկիլյան

Տեխնիկական խմբագրում՝ Ա. Պ. Նազարերյանի

Զնագործ նկարչի՝ Գ. Ա. Փարվանյան

Լուսանկարչական ապահովումը՝ Ա. Գ. Ներսիսյանի

Թարգմանիչներ՝ Մ. Ս. Ավելիխյան, Ա. Հ. Հակոբյան, Տ. Մ. Անդրնյան

Համակարգչային ապահովումը՝ Վ. Ռ. Խալաֆյանի, Ն. Զ. Ծափուրյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒթեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանեսի հավելված, 2012 թ.

Ստորագրվել է տպագրության 12.12.2012:

Թուրք՝ օֆիցիալի: Զնաշալի՝ 60x84 1/16:

Տեքստը՝ 120 էջ: Պայմանական տպագրական 7,5 մամուլ: Տպարանակը՝ 200:

Տառատեսակներ՝ «Արխալ», «Թայն» և «Բարիլա»: Տպագրությունը՝ օֆիտք:

Վկայական՝ 523: Դասի՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում